

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՓԱԼԱՍՈՒ ԲԵԼԶԵՆԳԻ ՊԱՏՄԱԿԹԵԱՆ


ԳՐԵՑ

ՍՏԵՓԱՆ ՄԱԼԻԱՍԵԱՆ



ԳՐԵԿՈՐԴ 1896

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՏՐԱՎԱՐՈՒՄ






M. L. On. Z. Vanevsky
Հեղափոք 1999

13/25 Հունիս 1896,
Թիֆլիս:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՓԵԼՈՍՈՒ ԲԻՒՃԵԳԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՓԱԽՍՏՈՍ ԲԻՒԶԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳՐԵՑ

ՍՏԵՓԱՆ ՄԱԼԻԿԱՍԵԱՆ



ՎԻԵՆՆԵ 1896

ՄԻՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ



524
h. 8520.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՍԱՆԱԴՅԱՆ

ՊԻՍԱԿԻՑՆԵՍԻՔ ԱԹ Ի Ի Կ Ե

ՓԱՐՍՉՈՍ Շ Բ Բ Զ Ա Ե Գ Ա Ե Գ Ա

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա.

Փառասոսի պատմութեան հեղինակի, առա սկզբանցի, լեզուի և գրադաստի մասնակի մնային առաջնական կարծիքներն ու նցանքներն են:

Փառասոսի պատմութեանը հայ բանասիրութեան համար երկար ժամանակից ի վեր մի առեղծուած է եղել: Թէ Երբ է գրուած այդ պատմութեանը, ավ է նորա հեղինակը եւ ինչ լեզուով է պատմագրել՝ այս խնդիրների մասին կարծիքները տարբեր են եղել: Ոմանք հեղինակին հայ են համարել, ոմանք յայն եւ ոմանք նոյն իսկ ենթադրել են երկու հեղինակ — յայն եւ ասորի. եւ հեղինակի ազգից էլ դատելով՝ պատմութեան սկզբնական լեզուն համարել են հայերէն,¹ յունարէն եւ ասորէրէն. իսկ պատմութեան գրութեան ժամանակը բոլորը, բաց ի չ. Գամբրօնէանից, համարել են Գ. գարի վերջերը: Բայց վերջին ժամանակներու, երբ Փառասոս պատմութեան նշանակութիւնը բարձրացաւ, եւ բանասիրութիւնն ակսեց աւելի մանրա-

¹ Այս տեսակէան ունեցող բանասէրներին մէջ յիշելու է մանաւանդ Հ. Յ. Վ. Գամբրօնէանին, որ հեղինակին համարում է Սահամառնեաց տոհմից մի հայ, որ օգտառած է Փառասոս իրազարարութեան հայաց յայն ժամանակադրի գրուածքից եւ գրել է իր պատմութեանը հայերէն լեզուով. Խորենացոց իրը 60 տարի առաջ: Տես «Հանդէս ամսօրեայ», 1889, մարտ, եր. 40—43:

Արտասուզած «Հանդէս ամսօրեայ» լրազրից 1896, թ. 2—4:



մասն հետազօտել վերցիշեալ խնդիրները՝ ընդ-
հանրացաւ այն կարծիքը՝ թէ հեղինակը յոյն է,
եւ յատկապէս այն հոռոմ ֆաւասաս եպիսկոպոսը,
որ պատմութեան մէջ յիշուում է երեք տեղ. այս
հիմնական տեսակէտից բնականապէս եղանակացուե-
ցաւ, որ ուրեմն պատմութիւնը դրուած է Գ.
դարի վերջերում, յունարէն լեզուով:

Քանի որ Փ. պատմութիւնն այսօր մեծ կա-
րեւութիւն է ստացել մատենագրական եւ պատ-
մուկան տեսակէտից՝ մենք հարկ ենք համարում մի
անգամ եւս քննութեան ենթարկել յիշեալ
խնդիրները, որոնց այս կամ այն կերպ լուծումը
ազդեցութիւն ունի եւ պատմութեան միշտ գնա-
չառութեամբ, ուրեմն եւ նորս մատենագրական եւ
պատմական արժեքի վերայ: Աեր այս յօդուա-
ծում սահմանափակուում ենք յիշեալ խնդիրների
քննութեամբ, զանց անելով ուրիշ, ոչ նուազ
կարեւոր խնդիրներ Փ. պատմութեան վերաբերու-
թեամբ, ինչպէս են բնադրաբննութիւնն, մատե-
նագրական եւ պատմական սաստմասիրութիւնն:

Այն բանասէրները, որնք Փ. պատմութեան
հեղինակին յոյն են համարում եւ պատմութիւնը
գրուած յաւարեն, Գ. դարի վերջերում՝ են Հ.
Գ. Զարբհանէլեան,¹ Ե. Մ.² եւ Ա. Գարագա-
շեան:³ Կայս հիմքերը հետեւեալներն են. —

1. — Զ. դպրութեան ցանկի վերջում հե-
տեւեալ խօսքը կայ. «Ստորոտ ամենայն պատմու-
թեանց յալազս իմ տեղեկութեան, որ միանգամ
զմատեանս ընթեռնոյք առելք տասն՝ համարական
թուօք»: Այս խօսքը առաջ հասկանաւ:

¹ Պատմ. Հայ. դպրութեանց, Բ. ապ., Եր. 222—232:

² «Փաւասառ Բուզանդ», Ալենա, 1890:

³ Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլս, 1895.

Հար. Բ. Գլ. Գ. եւ այլուր. — Առանձնակի կարծիք ունին
Հ. Բ. Սարգսինան («Արաթեանգեղոս եւ իւր բազմադարեան
գալստիքն», Եր. 298—299) եւ Կորայր Բի զանդացի («Քննա-
սէր», 1887, Պրակ Առաջն, Եր. 17—60):

մաքով, թէ հեղինակը խոստանում է իւր պատ-
մութեան վերջը տասն տուն (ստանաւորով) տեղե-
կութիւն տալ իւր մասին. եւ որովհեան դրբի վեր-
ջում այս տասն տունը չկայ՝ ենթագրում էին, որ
մեզ հասած Փ. ձեռագրիները թերի են վերջեց: Սա-
կայն նոր ժամանակներս բանասէրները ուրիշ մեկ-
ութիւն են տալիս այս խօսքին: Նկատելով որ Զ.
դպրութեան Ե. եւ Զ. գլուխներում յիշատա-
կուում է Փաւասառ եպիսկոպոս, իսկ այնուհետեւ
մինչեւ գրքի վերջը յաջորդում են տասն գլուխ՝
ուրքա վերսիշեալ խօսքը թարգմանում. են այսպէս.
“Իմ մասին տեղեկութիւններ բովանդակող բոլոր
գլուխներից յետոյ ընթերցողներդ կը գանէք
թուով տասը գլուխի..” (Ե. Մ.) կամ “Ստորոտ
(վերջ) բովանդակի պատմութեանս: Յաղագս իմ
տեղեկութիւն, որոց ընթեռնուն զմատեանս՝ եւ
այլ եւս տասն գլուխի..” (Ա. Գարագաշեան.) (այս
ինքն վերջ պատմութեան, յետոյ իմ մասին տե-
ղեկութիւն, եւ այնուհետեւ դարձեալ տասն
գլուխի:) — Եթէ «Ստորոտ» այսպէս հասկանաւ-
ու լինիք եւ հեղինակի իւր մասին խոստայած
տեղեկութիւնը փնտուելու լինիք Զ. դպր. Ե. եւ
Զ. գլուխներում՝ հեղինակի ազգութեան մասին
այլեւս տարակոյս չի մնայ. որովհետեւ Զ. գլուխ
յայտնապէս տառածե. — Եւ եին սոքա (Փաւասառ ե-
պիսկոպոս եւ եղբայրնորալլուստոմ) աղջառ Հոռում:

2. — Գ. դպրութիւնը այսպիսի վերջաբա-
նութիւն ունի. — Կատարեցաւ երրորդ դպր...
Փաւասառ Բիւզանդեայ ժամանակագիր մեծ պատ-
մագրի, որ Եր ժամանակագիր Յանաց, : Այստեղ
էլ, բանասէրների կարծիքով, յայտնապէս վկայ-
ուում է, թէ պատմութեան հեղինակը, Փաւասառ
Բիւզանդացին, յօյն է: (Հ. Զարբհանէլեան, Ա.
Գարագաշեան:)

3. — Զանազան պատմական դէպքեր հե-
ղինակը աւանդում է “տարբեր յայլոց պատմաց

բանից, որ համապես մը համար անկարելի էր. ո հեղինակի աւանդածները “բոլորովին կ'օտարանան յայլոց պատմչաց, եւ մանաւանդ ի խորենացւոյն... եւ բաւական են հաւատարմացնելու թէ ազգային պատմչի մը համար անկարելի է այդպիսի անդիտութիւն:” (Հ. Զարբհանելեան:)

4. — Հեղինակը “չափազանց ատելութեան ողի մը ունի ընդդէմ Հայոց, հընցած ատելութիւն մը, որով միշա առիթ կը վնասէ մեր ազգը վար զարնելու:” Կա ոչ երբէք իր Պատմութեան մէջ աշխարհն Հայոց, Խոհանորն Եր կը գրէ, այլ պարզբար աշխարհն Հայոց, Խոհանորն Հայոց եւն: Իսկ եթէ Յունաց վրայ ըլլայ Խոսքը, ասանկ կը գրէ. մէջ Խոհանորն Յունաց, մէջ Այնենոցոց +ողագ:” (Հ. Զարբհանելեան:)

5. — Հեղինակն այնպիսի մանրամասնութիւններ է պատմում Մանուէլի եւ Մերսուժանի կուուի մասին, որ “կը թուի թէ ականատես էր պատմիչն այս պատերազմին դիպաց:” (Ա. Գարագաշեան, Գ. Եր. 179:) Կայնակէն Ե. Մ. (Եր. 51) Ա. Ներսէսի կեանքի մերժին ժամերի նկարագրութիւնը համարում է ականատեսի կամ ժամանակակցի գործ:

Ըստունելով Հեղինակին յոյն եւ ժամանակակից Դ. Գարի անցքերին՝ բանասէրները սրոշում են եւ պատմութեան գրութեան ժամանակը մերձաւրապէս: Ե. Մ. համարում է այդ պատմութիւնը գրուած “ոչ ուշ քան 391 թաւականը:” Որովհետեւ Հեղինակը “յիշում է Զաւէնի եւ Շահակի աարիները, բայց Ասպաւակէսի հայրապէտաթեան աարին չէ յիշում, ուրեմն այդ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ է նա գրել իւր պատմութիւնը:” Ա. Գարագաշեան (Գ. 184) Հեղինակին համարում է մեռած Արշակունեաց թագաւորութեան բաժանումից քիչ յետոյ, գեռ եւս խորովի եւ Արշակի կենդանութեան ժամա-

նակ, որովհետեւ “չգիտեր զպատերազմն, որ ծագեցաւ այս երկու թագաւորաց մէջ, զմահն Արշակայ եւ զպառապուռ բարձումն թագաւորութեան նորա, ” ուրեմն 384-ից յետոյ, երբ բաժանումը տեղի ունեցաւ, եւ 386—387-ից առաջ, երբ ըստ Ա. Գարագաշեանի (Գ. 189) մեռաւ Արշակ եւ Յունաց բաժանի թագաւորութիւնը վերացաւ:

Պատմութիւնն այս ժամանակի, այսինքն Գ. Գարի ութմանական թուականների երկրարդ կեսին գրուած ենթագրելով՝ բանասէրները բնականապէս եղակացնում են, որ նա պէտք է գրուած լինէր ոչ հայերէն, այլ յատկապէս յունարէն, որովհետեւ Հեղինակը յայն էր, եւ Գ. Գարում հայերէն գրելու հնարաւորութիւն չկար: Մի բանէր (Ե. Մ.) բերում է Փ. պատմութիւնից նաև մի քանի նմաւշներ յունաբանութեան եւ յունարէն բառերի, որոնք, նորա կարծիքով, մատում են հայ թարգմանչի ձեռքի տակ եղած յունարէն սկզբնաղիքը:

Քննենք այս կէտերն համառօպիւ:

1. — “Ստորատից, այն մեկնութիւնը, որ Ե. Մ. եւ Ա. Գարագաշեան տալիս են՝ բռնի է եւ ձգձգուած, եւ չէ արդարանում ոչ լեզուի քերականութեամբ, ոչ լեզուի բառերով, ոչ մատենագրելու սովորութեամբ եւ ոչ ժամանակագրական հաշուով: Յարգելի բանասէրները, գայթագուելով Փառագուած բիւզանդայի եւ “Փառագուած ապիկոսու հոռոմ,” անունների նմանութիւնից՝ կամեցել են որեւէ կերպով նրանց նոյնացնել, եւ օգտուել են այն լոկ պատահական հանգամներից, որ մի կողմից հոռոմ ֆաւասոս եպիսկոպոսի մասին արուած տեղեկութիւնից յետոյ դասն գլուխ կայ մինչեւ զբքի վերջը, եւ միւս կողմից Հեղինակը խոստանում է զբքի վերջում դասն որուն տեղեկութիւն տալ իւր մասին: Ե. Մ.-ի մեկնութիւնն

6

բնդունելու համար՝ առ նուազն պէտք է ունենայ-
ինք գրուած. «Ի սորո՞վք ամենայն պատմութեանց
յաղագովիմ տեղեկութեանն' Ե՛ւ ալ կանութամն»:
թէսկէտ այստեղ էլ անկանոն կը լինէր «սորո՞վ եւ
ուսն բառերի գործածութիւնը: Սեր հեղինակի
նման հայկաբանը չէր դրի «ի ստորափի», փոխանակ
«զինի», «յետ», բառերին. չէր դրի «առևկը», փո-
խանակ գրելու «զլուխը», կամ մանաւանդ «կա-
նոնք», ինչպէս միշտ գործ է ածում «զլուխ»
բառի նշանակութեամբ: Փաւաստի պատմութիւնը
լեզուի նկատմամբ սըանչելի հայկաբանութիւն է,
եւ անկարելի է ենթագրել, որ նա այս երկու-երեք
տողամբ համաձայնական սիսալ անէր, զեղչեր ասա-
ցուածը, (մինչդեռ նա միշտ աւելսրդաբան է), եւ
երկու բառ գործածէր այնպիսի նշանակութեամբ,
որ անսովոր է թէ իրան եւ թէ առ հասարակ
սկեղէն դարի լեզուին: — Ա. Գարագաշեան
պարզապէս ուղղագրում է բնագիրն այն կերպով՝
պարզապէս ուղղագրում է բնագիրն այն կերպով՝
որ իւր նախառեալ գիտմանը յարմարեցնէ. —
«յաղագով իմ տեղեկութիւն, ... եւ այլու տան
յաղագով:» Այսպիսի կամայական ուղղագրութիւն-
էլութիւն: Այսպիսի կամայական ուղղագրութիւն-
նշանակով՝ ամէն մի խօսքի կարելի է տալ ուրիշ նշա-
նակութիւն: «Ի սկզբանէ արար Աստուած, զեր-
նակութիւն: կիուքը կարելի է ուղղագրել՝
կին եւ զերկիր, խօսքը կարելի է ուղղագրել՝
«Ի սկզբանէ արարաւ Աստուած, առա երկին եւ
երկիր:» Երբ բնագրի մէջ աղաւաղը թեան հետք
չկայ, երբ խօսքը, ինչպէս որ գրուած է, ունի
պարզ որոշ նշանակութիւն՝ ի՞նչ իրաւունք
պարզ որոշ նրան ծոմներու եւ տալու նորան ուրիշ, մէր
ունինք նրան ծոմներու եւ տալու նորան ուրիշ, մէր
ցանկացած նշանակութիւնը, որ խօսքն ինքն բառ
ինքեան չունի: Սակայն Ա. Գարագաշեանը չէ էլ
պնդում այս մեկնութեան վերայ, խօսավանելով
որ նա կարող է բռնի համարաւել. (Բ. 68:) Առանց
կանխակալ կարծիքի կարդալով այդ վիճելի խօսքը
կանխակալ կարծիքի կարդալով այդ վիճելի խօսքը
— «Ստորաս ամենայն պատմութեանց: Յաղագով
իմ տեղեկութեան ... առնիք տասն համարական

թուօք» — ուրիշ կերպ չենք կարող հասկանալ՝
քան այսպէս. «վերջբուլը պատմութիւնների: Տասն
տուն (չափաբերական տողերով) տեղեկութիւն
իմ մասին:» Այսինքն, պատմութեան գլուխների
ցանկը գնելուց յետոյ, որնիք բոլորն էլ սկսուամ են
յաղագով՝ հեղինակը նկատում է, որ այդտեղ,
Զ. գոր. Ժ. գլուխ, վերջնանում են բոլը պատ-
մութիւնները, — Ստորաս ամենայն պատմութեանց.
— ապա մի կենսագրական յաւելուածի վերնա-
գիրն է գնուամ ցանկի վերջը, դարձեալ սկսելով
յաղագով՝ բառով, — «Յաղագով իմ տեղեկութեան,»
եւ որոշում է, որ այդ տեղեկութիւնը բաղկացած
պէտք է լինի տասն տունից: Այս տասն տուն տե-
ղեկութիւնը չկայ մեղ ծանօթ ձեռագիրներում.
կամ հեղինակը մնացել է (կամ չէ կամեցել)
իրագործել իւր խօսաւումը, կամ օրինակողները
գուրս են ձգել, իրբեւ զբքի յիշատակարան, որ
պատմութեան հետ կապ չունի:

Քայց բացի լեզուի բնագրօսութիւնից՝ ծա-
գում են եւ ուրիշ անսեղութիւններ, եթէ մի
ըսպէ ընդունելու լինինք բնասաւելու վերցիշեալ
մեկնութիւնը: Հեղինակը իւր մասին խօսանում է
տեղեկութիւններ տալ. բայց երբ գիտում ենք այդ
տեղեկութիւնները պարունակող գլուխներին՝ տե-
սում ենք, որ տաշինը (Պ. Ե.) նոյնչափ վերա-
բերում է Փաւաստին՝ որչափ Զորթին — երկու
ընկեր եպիսկոպոսների. իսկ երկրորդ գլուխը (Պ. Ե.)
վերաբերում է ուղղակի Աստուած եպիսկոպո-
սին: Իւր մասին տեղեկութիւն տալ խօսացող
մատենագիրը, որչափ էլ զուրկ լիներ գրական ձա-
շակից եւ սովորութիւններից՝ այդ տեղեկութիւնը,
մանաւանդ երբ նա այնքան համառօտ է, կ'ամփիո-
փէր մի գլուխում, որ մայն իւր մասին կը լինէր. կ'աւե-
լացնէր նաեւ տեղեկութիւն, թէ ինչ շարժակիթ
լացնէր նաեւ տեղեկութիւնը, թէ ինչ շարժակիթ

մեր միւս մատենագիրներին: Խոկ այդ տեսակ՝ երկու գլխում ցրուած, ուրիշի կենսագրութեան հետ խառն, կամ ուրիշի կենսագրութեան մէջ պատահամբ յիշատակուած տեղեկութիւններ հեղինակի անձի մասին անօրինակ են: Չէ կարելի այնպէս ենթադրել, որ հեղինակը “ամենայն պատճեններին վասն իմ տեղեկութեան” մեծաշնչիւն բառութիւնը կաչէր այն հասուկասոր համառօտ տեղեկութիւնները, որոնք վերաբերում են Փաւստոս եպիսկոպոսին, ոչ միայն Զ. դպր. Ե. եւ Զ. գլուխներում, այլ թէկուզ՝ դըքի միւս երկու տեղերում եղած յիշատակութիւններն էլ միասին առած: Աերջապէս չէ կարելի ենթադրել, ինչպէս ուղղղ գիտում է Կ. Մառ¹, որ մի լուրջ հեղինակ այսպիսի առելցուած առաջարկեր ընթերցողն լուծելու, “Սարոստի խօսքից մակաբերելու՝ որ նա իւր մասին խօսելու է Զ. դպր. Ե. եւ Զ. գլուխներում: — Ենթադրելով որ խոստացուած տեղեկութիւնները Ե. եւ Զ. գլուխներում են զետեղուած, այսինքն թէ դըքի հեղինակը հոռոմ Փաւստոս եպիսկոպոսն է մենք հանդիսատես կը լինէինք այսպիսի անօրինակ տեղեկութեան: “Յամն խոսրովու եւ Արշակայ երկուց թագաւորայն բաժանաւորացն բաժանաւորացն մինչ դեռ եւս իսյին նոռոմ (Փաւստոս եւ Զորթ) ինդանի+,, այսինքն հեղինակն ինքն իւր մասին տեղեկութիւն է տալիս, թէ “Կ. (ինքը) այս ինչ թագաւորների ժամանակ դեռ եւս կենդանի էր:,, Ո՞վ իւր մասին գրում է, թէ Ես այս ինչ ժամանակ դեռ կենդանի էի: Գիտելու մի կետ էլ կայ, որ պատճեններն մէջ երբ հեղինակը Փաւստոս եպիսկոպոսի մասին է խօսում միշտ երրորդ գէմք է գործածում: — “Կոչեցին զծերունի եպիսկոպոսն,

¹ О начальной истории Арmenia Anonima, գետեղուած “Византійскій Временникъ” հանդիսում, 1894, Ռ. եր. 298: — Այսուղ հեղինակը այն կարծիքն է այսանում, որ “Սառրապը, որեւէ արտագրողի կեղծիք է:

որում անուն էր Փաւստոս:,, (Դ, Գ.) “Եւ առեալ զմարմին որբոյն Ներսէսի... պաշտօնեայք եկեղեցւոյն եւ Փաւստոս եպիսկոպոս եւ պաշտօնէիցն գլխաւոր Տրդած...” (Ե, ԻՒ.) “Էր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս. առ էր ի տան նորին իբրեւ թէլակալ:,, (Ե, Ե.) “Էր եղբայր մի Փաւստեաց եպիսկոպոսի:,, (Զ, Զ:) Այն ինչ երբ հեղինակն իւր մասին է խօսում առաջին գէմք է գործածում: — “Յիւրաբանչիւր իւր գլուխս պատճենաբեցի... զըր տոելցիս Ե՛,” (Խոստաբանութիւն). “Մէտ ի մերում ասս Ե՛տա+... մէր պատմութիւն... Հուն մի նշանակեցիւ+,, (Գ, Ա.) “Զամեա+ եթէ առաւելովքն նուազացին:,, (Գ, Ճ.) “Յաղացաց ի մակաբերէր հակասութիւն. մի կողմից հեղինակը “Ստորափի, առեղծուածով յայսնում է, որ ինքը հոռոմ Փաւստոս եպիսկոպոսն է, իսկ միւս կողմից երբ այդ Փաւստոս եպիսկոպոսի մասին է խօսում նրան միշտ ներկոյացնում է իբրեւ երրորդ, օտար անձ. մի կողմից երբ իւր մասին է խօսում, առանց իւր անունը տալու՝ միշտ ասում է “Ես, մեք:,, իսկ միւս կողմից երբ Փաւստոս եպիսկոպոսի մասին է խօսում (ուրեմն գարձեալ իւր մասին) միշտ ասում է “Կա,, մինչդեռ բնականաբար պէտք է խօսէր առաջին գէմքով: — “Ես Փաւստոս եպիսկոպոս, էի ի տան նորին թէլակալ, էր իմ եղբայր մի, հոռոմք եմք ազգու:,, եւն: Պարզ է ուշըմն որ ասրբեր անձեր են առաջին գէմքով խօսող հեղինակն եւ հոռոմ Փաւստոս եպիսկոպոսը: Բայց Փաւստոս եպիսկոպոսին՝ պատմութեան հեղինակ համարելու ամենամեծ անտեղութիւնը ժամանակադրական հաշիւններն են: Կերսէս կաթողիկոսին սարկաւոգ ձեռնադրելու համար “կոչեցին զծերունի եպիսկոպոսն, որում անուն էր Փաւստոս, եւ տայր (Արշակ) զնա ձեռնադրել սարկաւոգ:,, (Գ, Գ:) 364 թուին Փաւստոս եպիսկոպոսն պարզ:,,

այնքան ծեր է եղել, որ հեղինակը հարկ է համաշը և նրան բնորոշել “ծերունի” բառով, որին, երեւի իրաբեր աւագագունին եպիսկոպոսների մէջ, հրատիրում են սարկաւագ ձեռնադրելու կաթողիկոսցու հերակունիքն : Ուրեմն պէտք է ենթադրել, որ ՅԵՒՆԻ Փաւաստոս եպիսկոպոսը գոնէ իրը 75 տարեկան պիտի լինէր: Այս Փաւաստոսը Խոսրովի թագաւորութեան ժամանակ, 384ին եւ յաջորդ տարիներում “դեռ եւս կենցանի է եղել”, ինչպէս վկայում է Հեղինակը (Զ, Ե .). Ուրեմն մօտ 95 տարեկան զառամեալ ծեր: Պատմութեան Հեղինակը վկայում է, որ Խոսրովի բաժնում (այսինքն ՅԵՒՆԻ 384ից ոչ առաջ) կաթողիկոսութիւն արին նախ՝ Զաւէն 3 տարի, յետոյ Շահակ 2 տարի, (Զ, ՊԼ. Բ. Եւ Գ.) յետոյ “Ասպուրակ ոմն, որ եր այր քաղցր եւ խոնարհ, բարերար եւ մարդասէր զամենայն աւուրս կենաց իւրոց”, (Զ, ՊԼ. Գ. Եւ ԺԵ.): Ուրեմն Հեղինակը ոչ միայն Ասպուրակէսի կաթողիկոսանալը դիտէ, այլ եւ նորա ընթացքը բոլոր կեանքի ժամանակ, եւ անցեալով խօսելով նորա մասին — “ոչ ինչ չարէր յանդիմանութեամբ խօսել... բայ կրօնիցն Զաւէնայ հնացը նա, առանձէր զամրայեալու”, եւն — ցայց է տալիս, որ Ասպուրակէս արդէն մեռած էր իւր գրած ժամանակ. (այլապէս՝ կ'ասէր. Ոչ չարէ, բայ կրօնիցն Զաւէնայ քնայ, ոչ անի եւն:) Արդ եթէ Հեղինակի ժամանակադրութեան վերաց հիմունիք՝ կը տեսնէնք, որ նա չէր կարող իւր պատմութիւնը գրել յառաջ քան (384+3+2 + Ասպուրակէսի տարիները) գոնէ 392 թուականը. իսկ եթէ հիմունիքը ուրիշ Հեղինակների ժամանակադրական տեղեկութիւնների վերաց՝ այդ պատմութիւնը գրուած պիտի համարենք ամենից ուշը՝ 389 թուին, քանի որ այդ թուականի տեղեկութիւններ է նա պարաւակում: Արդ 389ին Փաւաստոս եպիսկոպոսը կը լինէր առ նուազն իրը 100 տարեկան, իսկ 392ին՝ մօտ 103 տարեկան: Որչափ

էլ Ե. Ա. ի Հետ ընդունինք, որ “Բուղանդ դրել է իր պատմութիւնը ծերութեան, դաւցէ եւ խորին ծերութեան հասակում”, գարձեալ անկարելի ենք Համարում, որ 100տարեկան ծերունին ընդունակիլենի մի բնդարձակ պատմութիւն գրելու, լիքազմաթիւ անոններով ու մանրամանութեամբ, աշխատով եւ երեւակայութեամբ: Դա փիղեկապէս անհնար է: Այս խորհրդածութիւնները մեզ իրաւոնք են տալիս ասելու, որ Փ. պատմութեան Հեղինակը հոսոմ Փաւաստոս եպիսկոպոսը չէ, որ մի քանի անգամ յիշուում է պատմութեան մէջ, եւ թէ սխալ է այն մեկնութիւնը, որ տալիս են “Ստորատին”, Ե. Ա. Եւ Ա. Գարագաշեան:

2. — Փ. պատմութեան Հեղինակին յոյն համարովների երկրորդ հիմքը — Գ. գլուխութեան վերջաբանութիւնը — զուրկ է կարեւորութիւնից: Այսաել յիշուում է յիրաւի, որ Փաւաստոս Բիւզանդ “Եր ժամանակադիր Յունաց”, բայց սորա Հետ միասին ասուում է, թէ Փաւաստոս Բիւզանդ էր ժամանակադիր “Ած պատճենիքի:”: Այս “Ած պատմակիրը”, անվիճելի կերպով ապացուցանում է, որ Գ. գլուխութեան վերջաբանութիւնը յամենայն գէսլ չէ կարող Փաւաստոս Բիւզանդի գրածը լինել, որովհետեւ սա չէր կարող ինքն իրան կոչել “մեծ պատմագիրի:”: Այս վերջաբանութիւնը կարող է պատկանել որեւէ գրչի, որ գրի “Փաւաստոս Բիւզանդ” վերնագրից մնարաւելով՝ Հեղինակին յոյն է համարել. այս գէսլում այդ վերջաբանութիւնը կրցնում է մեր աշքում իւր նշանակութիւնը՝ իւրեւ վկայութիւն Հեղինակի ազգութեան մասին: Բայց մենք աւելի հաւանական ենք Համարում, որ այդ վերջաբանութիւնը նոյն իսկ Հեղինակի գրածն է, բայց ոչ յոյն Փաւաստոս եպիսկոպոսի, այլ անձանօթ հայ Հեղինակի, որ յայտնի գիտումներով հարկ է համարել պրոյել իւր աղջութիւնը եւ գիրքը վերադրել յոյն Փաւաստոսի:

3.—Գ. Հիմքը նոյնակա զաւրկէ է կարեւորութիւնից: Պատմական տեղեկութիւնները խորենացաց տարբեր կերպով աւանդելը երբեք չէ կարող ապացոյց համարուել հեղինակի օտարազգիութեան, այլ միայն նորա անտեղեկութեան, մասնաւանդ երբ այդ տարբեր աւանդում պատմութիւնների մէջ չկայ դիտաւորութիւն ազդը նուառացնելու: Այս հէտի վերայ չ'արժէ երկար կանգ առնել: Պատմական այն անցերաւմ, որոնք տարբեր են աւանդում Փաւստոփից եւ Խորենացուց՝ բանասիրութիւնը ներկայումս սխալուած է համարում Խորենացուն, եւ ոչ ընդ հակառակն: Խակ եթէ սխալուած համարէինք Փ. պատմութեան հեղինակն: ոչ թէ չ. Զարբէհանէլեանի նման պիտի եղակացնէինք, թէ ազգային պատմէի մը համար անկարելի է այդպիսի անդիտութիւն, այլ աւելի մեծ իրաւունքով՝ թէ “ժամառէկէց պատմէի մը համար անկարելի է այդպիսի անդիտութիւն”:

4.—Գ. Հիմքի գէմ, այն է, որ հեղինակը “չափազանց առելութեան ողի մը ունի բնդութէր Հայոց, որով միշտ առիթ կը փնտուէ մեր ազդը վար զարնելու” — արդէն բաւարար առարկութիւններ արել են մեզանից առաջ: Ա. Գարագաշեան (Բ. 72) բազմաթիւ օրինակներ է բերաւմ Փ. պատմութիւնից, ուրի հեղինակն այնչափ “դրուատեօք կը խօսի ազգին հայրապետաց, թագաւորաց, զօրավարաց, նոյն խակ երկրին կարդաց եւ յօրինուածութեան մերսոյն”, առափ եւ “չի կրնայ թշնամի կոչուիլ՝ եթէ ուրեք ուրեք պատմէ ազգին թերութիւններն եւ մոլորութիւններն եւս անտչառապէս”: Նոյն հեղինակն, ինչպէս նաև չ. Գամթըքան նորանից առաջ¹, իրաւամբ նկատում են, որ Փ. հեղինակից շատ աւելի պարսաւում է Հայոց՝ Խորենացին, որի հայ ազգութիւնը սակայն չէ կա-

¹ “Հանդէս ամսօրեայ», մերդիշեալ տեղում:

րելի ուրանալ այս պատմառով²: — Մեր կողմից մի երկու նկատողութիւն աւելցնենք այստեղ այն կետերի վերաբերութեամբ, որոնք գեռ պահպամ են իրանց նշանակութիւնը: — Փ. պատմութեան հեղինակը երբեք չէ գրում աշխարհն Հայոց, թաղաւորն մէր, այլ աշխարհն Հայոց, նադառողն Հայոց. խակ երբ Յունաց մասին է խօսում ասում է մէծ թագաւորն Յունաց, մէծ Աթենացւոց քաղաք: Որ հեղինակը չէ գրում աշխարհն Հայոց, թագաւորն մէր՝ այդ միշտ է. բայց ուահ հեղինակի օտարազգիութիւն նշան չէ, այլ ժամանակի մատենագրելու սովորութիւնը²: Կորինը անպայման հայ է եւ հայերէն է գրել. բայց նա էլ շարունակ գրում է. “Գիրս նշանագրոց Հայաստան ազգին», (Յոր ապեր. Եր. 16.) “Գատնայոր յերկիրն Հայոց ... աշխարհին Հայոց», (26). “Երեւելով աշխարհին Հայոց», (33). “Թագաւորին Հայոց», որոց անուն կոչէր Վլաւաշապուհն», (17). “Ի հինգերարդ ամիշամշապհոց արքային Հայոց» (Եւն): Կոյն երեւոյթը խիստ յաճախ նկատուում է եւ Ազաթանգեղոսի մօտ³: Գալով “մէծ թագաւորն Յունաց», “մէծ Աթենացւոց քաղաքին» խօսքերին՝ նկատենք, որ հայի համար էլ բնական է մեծ կոչել այն որ արդարեւ մեծ է: Բայց զարմանալին այն է, որ Փ. պատմութեան հեղինակը մի մի անդամ միայն մէծ կոչելով Յունաց կայսրը եւ Աթէնքը՝ նոյն ափազար աւելի յաճախ գործ է ածում Հայոց թագաւորների եւ հայ քա-

¹ Փ. հայատեցութեան գէմ աես եւ Ե. Մ. Եր. 4—5:

² Ն. Վառ (Անօնոմա, 298) նկատում է. “Այս անկարեւոր երեւոյթը (այսինքն Աշխարհն Հայոց, մէծ թագաւորն Յունաց) պարզապես նորանով է բացարարուում, որ Փաւստոս պատկանում է գեռ այն ժամանակն: երբ նորագարձ հայերին ասորի ուսուցիչները քրիստոնէական կրօնի հետ պատուասում էին եւ սիր քաջապահան աշխարհահայտացքը, որ տիրապետում էր եւ Ասորիկում, եւ ազգային ինքնամանալութիւնը գեռ արձարծուել: Յամենայն դէպս նոյն երեւոյթնախռութիւնի մօտ:

³ Տպագր. Թիֆլիսի, 1882, Եր. 26, 29, 33..., 502, 505, 506, 507 Եւն:

զաքների համար. — (Եւ այս հանդամանքը՝ տարօրին զաքներով՝ չեղակատ և առաջ ի նկատ չ. Զարթհանէլեան, որ այնքան մեծ կարեւորութիւն է տալիս՝ հեղինակի «մեծ» կոչելուն Յունաց կայսրը եւ Աթենքը): Այսպէս մենք գտնում ենք. «Մեծի թագաւորին Խոսրավուն»: (Գ., Ը.) «Թագաւորին մեծ Արշակ» (Գ., ԺԱ.): «Մեծ արքայն Տիգրան» (Գ., ԺԵ.): «Զմեծ թագաւորին Հայոց զՊատկ» (Ե., ԼԲ.): Կոյնակն եւ՝ «Արշակունեաց քաջարանց» (Գ., ԺԱ.): «Քաջարանց Խոսրավ թագաւորին Հայոց մեծաց» (Գ., ԺԱ.): «Զմեծ քաղաքն Երսուանդաշասա» (Գ., ԾԵ.): «Քաղաքին մեծի Ըրտաշատուն» (Գ., Ը.): «Ի քաղաքն մեծ յԱրտաշատ» (Գ., ԺԲ.): Դա այն, որ Հեղինակը մեծ է կոչում նայն իսկ Մազքթայց թագաւորին — «Սահեսանայ մեծի թագաւորին»: (Գ., Է.): Հայոց թագաւորներին այս տիտղոսները չեր կարող տալ ոչ մի յոյն, եւ ոչ էլ անաշխատ կամ անարբեր հայր, ոյլ թունդ ազգատէր, ազգամուլ հայր միայն, որով հետեւ հայ թագաւորները Գ. Դարի Երկրորդ կեռում անզօր թոյլ իշխաններ էին, Յունաց եւ Պարսից քաղաքականութեան խաղալիկ, նոցա ձեռքով ու համաձայնութեամբ թագաւորած, նոցա ձեռքով գահից իշեցրած: Կրանց Նշդ կոչելլ ուրեմն պատմական սխալ է, որ կարող է բացատրուիլ միայն հեղինակի չափազանց ազգասիրութեամբ: — Մենք յետոյ ուրիշ հանդամանքներ մէջ կը բերենք, «ամանք շօշափելի կերպով ցցց կը տան հեղինակի հոգով, որով զգացնունքներով ամենազուտ հայ եւ հայաէր լինելը, որով միանդամայն կը հեղբուժի կարծիքը հեղինակի հայտեցնութեան մասին, որ մի խոշոր թիւրիմացութիւն է:

5.—Ե. Հիմքը, որով բանասէրները կամենում են ապացուցանել, թէ պատմութեան հեղինակը ականատես կամ ժամանակակից է եղել իւր պատմած դէպէրին (ուրեմն եւ պէտք է լինի Գ. Դա-

րում ապրով հուսոմ Փաւստոս Եպիսկոպոսը՝ պատմութեան մէջ նկատուած մանրամանութիւններն են, որոնք այնպէս մանր եւ սիրով նկարագրուած են: Ա. Գարագաշեան (Գ., 179) իրեւ պյափիսի, ականատեսի նկարագրութիւն՝ մատնացոյց է լինում Մերսութանի սպանութեան գլուխ վերայ. (Ե. ԽԳ.): իսկ Ե. Ա. (51): Ա. Կերպիսի կեանքի վերջին ժամերի նկարագրութեան վերայ. (Ե. ԻԳ.): Կարող ենք մեր կողմից աւելացնել, որ այդպիսի մանրաման կենդանի նկարագրութիւններ ուրիշ շատ տեղ կան Փ. պատմութեան մէջ, եւ ուրաք, ինչպէս նաև բազմաթիւ յատուկ անունները, յիրաւէր կարող էին մեղ համոզիլ, որ հեղինակը ականատես, գոնէ ժամանակակից է իւր պատմուծներին՝ եթէ չունենայինք հաստատ պատմոյցներ՝ թէ կարելի է նոյնպիսի նկարագրութիւններ անել աւանց ականատես կամ ժամանակակից լինելու: Ահա մի քանի օրինակ մեր մատենագրութիւնից. — «Խոյս ետ Հային յերեսաց նորա, եւ գնայր նա փախատական... եւ ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մեեղին արձանն, յերկիր խարսիեալ վատրեալ նեան»:¹ — «Զոր տեսեալ թագաւորին Բալայց՝ մօտ հասանէ յարքայն... եւ զայդ ընդ պարանոցին զգլուխ երիվարին»:² — «Հեծաւ արի արքայն Արտաշէս... արագ հասուցանելով ի բանակին իւր»:³ — «Զայս, եւ որ այլ այսպիսիք բազումք, եթեր մերս աշխարհիս... եւ ի խրախճանութիւնս օրինաւոր»:⁴ — «Խեծաւ դՔուռիկիկ-Ղալալին, գլուխ եդի զլսու գեօսին... Կայինք՝ խրօզէր ինչ տ'ասի»:⁵ — «Աէկ մեծ,

¹ Ա. Գար. Սեբէսոսի Անանունի պատմութիւն, Հքար. Պատկ. Եր. 3—4:

² Խորենացի, Բ., 2Ե:

³ Անդ, Բ., Ծ.:

⁴ Անդ, Ա. ԻԳ.:

⁵ Գարիթ եւ Մէկը (Հքար. Ա. Արեղեանի), Շուշի, 1889, Եր. 23:

փիր, ախտիար խալուր ըմ կէր մէջքեր... խալուր սայց. ինա ճուչ կանաչ չաղբը¹:՝ Նպին Փ. Պատմութեան հեղինակը նպագիսի մանրամասն, կենդանի նկարագրութիւններ է անում այնպիսի դիպուածների, որնոք երբեք իրապէս չեն կատարուել, այլ առասպել են, որնոց ուրեմն չէր կարող հեղինակը ժամանակակից եւ ականատես լինել: (Համեմատել Դ, ԽԵ, Պապի զարդարութութիւններն ու տեսարաննը Պապի եւ Փառանձեմի մէջ: — Դ, ԾԳ. Եւ Ե, Է. — Արշակի ձերակալութիւնը եւ մահը տեսարանները Արշակի եւ Շապուհի, Արշակի եւ Գրաստամատի մէջ: Վերջնի տեսարանը Եթէ ոչ առասպել՝ գոնէ անմատչելի էր հեղինակին): Վերջապէս հէքեաթների մէջ Հարիւրաւոր տեղերում պատահում են այսպիսի մանրամասնութիւններ եւ բնական նկարագիրներ. բայց ոչ ոք գորանից չէ հետեւցնում, թէ հէքեաթների ստեղծողները ժամանակակից կամ ականատես են եղել այն գործերին, որնոք երբեք դյուոթիւն չեն անեցել իրականապէս: Մանրամասնութիւնների, բնական նկարագիրների աղբիւրը գտնուում է հեղինակի երեւակայութեան մէջ. Երբ հեղինակի մէջ զարդացած է այս ընդունակութիւնը՝ նա, առանց կարօտելու աչքի կամ ականջի թելադրութեան, ստեղծում է կենդանի պատկերներ, որնոց զարդարում է այնպիսի մանրամասնութիւններով ու հանգամանքներով, որ նա ձեռք է բերել՝ դիտելով կենդանի երեւակայութները: Մեր խօսքին ապացոյց են բազմաթիւ գեղարուեստական դրսածքները բոլոր ազգերի մատենագրութիւնների մէջ: Փ. պատմութեան հեղինակը այսպիսի բանաստեղծ, վառ երեւակայութեան տէր պատմագիր է. մանաւանդ բանաստեղծական են նորա աղբիւրները — ժողովրդական վէպերն եւ աւանդութիւնները:

¹ Անդ, եր, 29:

Այս հանդամանքով են բայցատրուում նորա պատմութեան մէջ ոչ միայն մանրամասնութիւններն ու կենդանի նկարագրութիւնները, այլ եւ օտարաստի չափազնցութիւնները, բաղմաթիւ հրաշքները եւն:՝

Փ.ի պատմութիւնը Դ.գարի դործ համարող բանաստեների մի փաստն էլ այն է, որ այս պատմութիւնը համարում է մինչեւ Արշակունեաց թագաւորութեան բաժանումը (384-ին, ըստ այժմեան հաւանական ենթադրութեան), որ հեղինակը մեռած պէտք է լինի այս բաժանումից քիչ յետոյ, որովհետեւ չգիտէ Խորսովի եւ Արշակի մէջ ծագած պատերազմը, ոչ Արշակի մահը եւ ոչ նորաթագաւորութեան վերջանալը: Սակայն այս արտամաբանութիւնը ուղիղ չէ: Խորենացին էլ իւր պատմութիւնը վերջացնում է Արշակունեաց թագաւորութեան բարձումն եւ Ս. Սահակի ու Մեսրոպի մահով. Ա. Փարագեցին էլ իւր պատմութիւնը վերջացնում է Վահանի մարզպան ընտրուելովը. բայց այս հանդամանքներից չենք եղանակացնում, թէ Խորենացին մեռել է Ս. Սահակից ու Մեսրոպից քիչ յետոյ որովհետեւ չէ գրել Վարդանաց նահատակութիւնը, կամ Փարագեցին մեռել է Վահանի մարզպան նշանակուելուց անմիջապէս յետոյ, որովհետեւ չէ յիշում նորա գործերը մարզպանութեան ժամանակ: Այս երեւոյթը ուրիշ՝ բնական բայցատրութիւն ունի. հեղինակը նախապէս որսչում է իւր գրելիք պատմութեան անհմանը, եւ իրբեւ վերջնի կէտ իւր պատմու-

¹ Վեջ բերենք այսաեղ չ. Այսանեանի այս բնորոշ տողերը Փ.ի պատմութեան մասն՝ «Ասոր» (Փ. Բիշ զանդացուոյն) ոսկեղէն իւրաւո՞ գրովն բանաստեղծական անզուսպ ցնորիցը թափի մակն գրաւո՞ օրինաց կապահէն ապաստմը կ'ելլէ... շաս անգամ կարծես թէ քանի մը տող միան՝ չին Գողթան երգերուն շարունակութիւնն է աշքիդ տակի փառուել եւ ոգելից կրիսութիւններով՝ ի՞նն, քերակ ներած. եր. 58:

թեան՝ ընտրում է մի նշանաւոր, գարագլուխ
կազմող (epochemachend) դիպուած, որից յետոց
պատահածները նորա ծրագրի մէջ չեն մտնում: Այսպիսի նշանաւոր դիպուած է Խորենացու Հաւ-
մար՝ Հայաստանի քաղաքական իշխանութեան
բարձումն եւ ազդի երկու լուսաւորիչների մահը,
որի հետ եւ հայրապետութեան դադարելը Ա.
Գրիգորի առհմից, — դիպուածներ՝ որ նա այնպէս
սրասուչ սրբում է: Ա. Փարագեցու համար՝ Վահանի
մարզպանութիւնը, որով փակուում է յիսեամեայ
կրօնական պատերազմների վերջին երեսը — քրիս-
տոնէութեան յաղթանակով: Այսպիսի կետ է եւ
Փ. հեղինակի համար՝ Արշակունեաց թագաւորու-
թեան բաժանումը, երբ “բարում գաւառք յեր-
կացունցն հատան, նուռազեաց, բաժանեցաւ, ցրուե-
ցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ
մեծութենէն:” (Զ, ա:): Հեղինակի համար՝ այս
բաժանումը վերջ էր Հայոց պատմութեան: Հենց
դրբի սկզբումն էլ հեղինակը որոշում է իւր պատ-
մութեան սահմանները. — “Ժամանակի իր ա-
րարեալ ի թագաւորութենէն խոսրվու որդւոյ
Տրդատայ մնչւ ի միւս վերջին ժամանակի վարենքելոյ
թագաւորացն Հայոց, եւ ի քահանայապետու-
թենէն վրթանայ... մնչւ ցայսունի է վերջինոն
որք կային գլխաւորք եափսկուոք Հայոց.” (Խոռ-
ապահութիւն:): Հեղինակի դորձածած լեզուից
— “ի միւս վերջին ժամանակն”, “ցայսունի ի վեր-
ջինոն, որք կային գլխաւորք, ” — եւ այն հանգա-
մանքից, որ նա իւր պատմելիքները կրչում է
“կարգ անցելոց իրաց, ” երեւում է, որ նա ժամա-
նակակից չէ եղել իւր պատմուծներին, այլ որքա-
մանցեալի յիշասակարաններ են: Այս բանը մա-
նաւանդ բացայացաւ է երեւում Զ. ա. վերջին
բաժերից. — “նուռազեաց, բաժանեցաւ, ցրուե-
ցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ
մեծութենէն յայն ժամանակն եւ յահայ:” Եթէ

հեղինակը ժամանակակից լինէր՝ նա կ'առէր .
“յայսմ ժամանակի”, կամ “ի ժամանակս Ֆք.”.
իսկ “յայն ժամանակն եւ յահայ” խօսքը կարող էր
գործածել միայն այն մարդը, որ տեսած էր Ար-
շակունեաց թագաւորութեան իսպան բարձումը,
որպէս իսպան այդ խօսքը նշանակում է, թէ Ար-
շակունեաց թագաւորութիւնը այսունշատ է, գույ-
նելու ժամանակը:

Վեղապէս Փ ի պատմութիւնը յայն հեղի-
նակի դորձ համարող բանակըները բերում են մի
փաստ եւս, այն է, որ այդ պատմութիւնը գրուած
է եղել յունարէն լեզուով (Ե. Մ., 21.) եւ
թարգմանուած է հայերէն թարգմանիչներից մէկի
ձեռքով. (Գարագաշեան Բ, 74:) Այդ բանակը-
ները սակայն ոչ թէ պատմութեան բնագրում
գտնում են փաստեր, որնք ապացուցանիեն յու-
նարէն սկզբնագրի գյուտթիւնը, այլ սկզբնագրի
յունարէն գրուած լինելու եղբայրութեան էն այն
հանդամանքից, որ պատմութեան հեղինակ են
համարում յայն Փաւասաս եպիսկոպոսին, եւ պատ-
մութիւնը գրուած՝ Դ. գարի վերջերին, երբ հայե-
րէն գրելու հնարաւորութիւն չկար: Այսպէս է
արամաբանում Ե. Մ. (Եր. 13 եւ յոջ.). Երեւի
նոյն հիմքն ունի եւ Ա. Գարագաշեան, որ պնդում
է, թէ “թէ բուզանդ է թարգմանութիւն, եւ
թարգմանութիւն մից ի թարգմանչաց՝ յայտնի է
եւ առանց հակառակութեան,” (Բ, 74). գունէ նա
նոր փաստեր մէջ չէ բերում ապացուցանելու հա-
մար իւր այս անպայման վճիռը, որ ըստ մեզ շատ
հեռու է յայտնի եւ առանց հակառակութեան
լինելոց: Տրամաբանութեան յիշեալ եղանակն
ինքն ըստ ինքեան ճիշտ է, բայց եղանակացութիւնը
անընդունելի է, որպէս իսպան ճիշտ է, ինչպէս տեսանք՝
կառածեիլ եւ սխալ են այն հիմքերը, որնցիցից
բղասում է այդ եղանակացութիւնը: Յիշաւի, երբ
մնիք համոզուում ենք, որ այդ պատմութեան

Հեղինակը յոյն Փաւստսս եպիսկոպոսը չէ, որ հաստատ ապացոյց չկայ այդ պատմութիւնը դ. գրում գրուած համարելու՝ այլ եւս ոչ մի հիմք չի մնայ՝ նորա ոկղզնադիրը յունարէն լեզուով գրուած ենթագրելու։ Թէպէտ եւ Ե. Ա. փորձում է բուն բնագրից մի քանի օրինակ բերել յունարանութեան եւ յունարէն բառերից բայց նոյն ինքն էլ խոստովանում է, որ “այդ յունաբանութիւնները շատ սովորական են մեր հին գրականութեան մէջ” (Եր. 21), որ “յիշեալ յունարէն բառերից շատերը գործ են ածել եւ մեր հին մատենագիրները” (անդ). նա խոստովանում է, որ “Բուզանդարոնը համարեա թէ չէ ներկայացնում խորթ օտարաբանութեան օրինակներ, եւ որ նրա լեզուն աւելի բնական է՝ քան Ե. գարու մեր նոյն իսկ ինքնուրբյն հեղինակութիւնները” (անդ). նա մինչեւ իսկ նկատում է, թէ “Փաւստսի պատմութիւնը գրած է այնքան կենդանի հայտնութեամբ, այնքան աշխարհիկ ոճեր ու գարձուածներ է պարունակում նա, — որ առաջն հայեացքից գժուար է այդ երկասիրութիւնը թարգմանական համարելու” (Եր. 12)։ Ե. Ա. աւելի նշանակութիւն է տալիս Հերակլ անուան երկու անգամ գործածուելուն՝ Վահագն անուան փոխանակ, եւ Սատրապ բառի յաճախակի գործածութեան՝ նախարար բառի տեղ։ Բայց Հերակլ անուան գործածութիւնը գիւրաւ բացարուում է նորանով, որ գրագէտ Հայոց մէջ անխափի գործածական էին Վահագն եւ Հերակլ, որոնց առասպելներն ու պաշտամունքը շատ նման լինելով՝ նոյնացել էին Հայոց համար։¹ Իսկ աստրապի՝ գործա-

¹ Տես Խորեն. Ա, ԷԱ. Բ, ԺԲ։ — Կաեւ Ագաթանգեղոսի յոյն թարգմանիքը Հերակլ է թարգմանել հայ բնագրի Վահագնը երկու գիրը նոյն համարելով։

² Պատկանեանի հրատարակութեան հիմք կազմող ձեռագիրը միասունի սատրապեարը եւ ոչ “սատրապը”։ Տես Փաւստս, Ա. Գետերբուրդ, Եր. 57, ձանօթ։

ծութիւնը բայցարուում է հեղինակի ձոխաբան ոճով եւ նախնեաց լեզուի պէսպիսութեան օրէնքով։ Հեղինակը միեւնայն նախարարը արտայայտեւու համար անխափի գործ է ածում — նահապետ, ասնուաէր, իշխան, շահապ, տէր, պէտ, աւագանի, մեծամեծք, նախարարը։ Ինչ զարմանք՝ եթէ երբեմն գործածէ եւ սատրապ բառը, որ հայերէնում վազուց գործածական պէտը է լինէր, քանի որ գեռ նախնեաց լեզուում ունինք նորա հայացած ձեւն էլ — շահապ։

Եթէ օտարազգի բառերի գործածութիւնը մի գրուածքում նշան համարուէր օտարալեզու բնագրի՝ մենք յունարէն բնագրի պիտի ենթադրէնք նաեւ Կորիւնի, Խորենացու եւ Փարացեցու համար, պարսկերէն բնագրի՝ Եղիշէի, նոյն իսկ Փաւստսի համար Կորիւնի փոքրիկ գրուածքը, օրինակ, տասնեամինելով յունարէն բառեր է գործածում, որոնցից շատերը առաջն անգամ նորա մէջ են պատահում։ — աղիաբետ, սիւզոբայ, կղերական, հաետորաբան, հեթանոս, բարբարոս, սիւնչողոսական, մարտիրոս, քարտէզ, կանթեղ, սաւկեր եւն, բայց ի սովորական պատեք, աւգաստական, կաթողիկոս եւ այլ բառերից։ Խորենացու եւ Փարացեցու մէջ Հարիւնեկով են պատահում յունարէն բառեր, Հարիւրաւոր են պարսկերէն բառերը եւ սասցուածքները Եղիշէի եւ Փաւստսի մէջ։ Բայց Փ. ի պատմութեան լեզուն այնքան բնական, կենացանի է, այնքան ձեւերն ու գարձուածքները բուն հայկական, որոնցից շատերը մինչեւ հիմայ ել ժուղկագական կազմութիւնը է մեզ իւր ճոխաւթեամբ, կրկնութիւններով, պատկերաբար տասյուածքներով, որ անկարելի է նրան թարգմանութիւն համարել որեւէ լեզուից։ Եւ յիշաւի, չնայելով որ Փ. ի լեզուն այն նութիւն, Կերածութիւն, Եր. 63—118։

¹ Բազմաթիւ օրինակները տես Քննական քերականութիւն, Կերածութիւն, Եր. 63—118։

քան առատաբան, մինչեւ իսկ աւելորդաբան է, չնայելով որ շատ անգամ անտես է անում լեզուի քերականութիւնը, որ նախադասութիւնների մէջ կապը չէ պահպանում՝ այնու ամենայնիւ նա մեղաւելի հասկանալի է, քան բոլոր Եւ դարի գրուածքները, սոյս մէջ հաշուելով նոյն իսկ Փալափեցուն։ Այս գաղանիքը բացարաւում է միայն սրբանով, որ նա գրուած է բուն հայկական լեզուով ու ոճով, որի ողին մեղ հարազատ է, մեր ըմբռնորութեան դիւրամատչելի։ Մեր բոլոր մատենագրութեան մէջ չենք յիշում մի ուրիշ գրաւածք, որ Փաւաստոփ չափ կենդանի եւ ընաանի լեզու ունենայ, որի մէջ հեղինակի ողին լեզուի եւ չափաւորութեան որեւէ անձ կարելվ՝ յորդարսողև գուրս թափաւի, եւ իւր կրկնութիւններով, բառերի կուտակութիւններով եւ անկանոնութիւններով մեղ ոչ թէ ձանձրացնէ ու զզուեցնէ, այլ ընդհակառակն՝ ողեւորէ եւ սիրահարեցնէ իրան։ Ի՞նչ օտարազգի բնագիր պէտք է լինի՝ որ սյապիսի յորդահեղեղ, ողելից թարգմանութիւններ տայ. — “Այսպէս պաշտրեալք, ընկազմեալք, գերեալք, վանեալք, կըծկեալք, ամեններեան առ հասարակ յերկիր անկեալք անբարբառ կային, անխալայք ի տեղուզէն, որը էին տնհմը եւ աղդք աշխարհակերք, աշխարհակերք, ժանդապործք քրմացն.” (Գ. Գ. :) — “Եթէ զցայդ եւ զցերեկ նստեալ վարդապետացն եւ բաս նմանութեան ամպոցն իրեւ զյորդահեղեղինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին՝ ոչ ոք ի նոյանէն եւ ոչ մի ոչ, եւ ոչ մի բան, եւ ոչ կես բանի, եւ ոչ գոյզն յիշատակի ինչ, եւ ոչ նշմարանս ինչ զոր լուկինն եւ ոչ կարէին ինչ անել ի մոտի.” (Գ. Ժ. :) — “Եւ այլ ոչ ոք էր, որ գտառաջնորդաւթիւն գլխաւորութեան քահանապետութեան վերակացութեանն ոք տէրուական տանն հրամանատարութեանն կատարեալ՝ պաշտամանն յաջորդէք.” (Գ. Ժ. :) — “Եւ

յաւուրտ ձմերայնպին, յորժամ կուտեալ գիզեալ զմէծութիւն բազմութիւն թանձրութեան ձեանցն կուտակեալ հիւսեալ ձեանցն ի վերայ ձմերային լերանցն, յայնպիսի լերանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամեր ուրեք երթալ ի պէտս ձանաւպարհի., (Գ. Ժ. :) — “Ի ինդիր անկանէր, զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բայ ի մեծութենէ, զի այնչափ ուրեք ոչ գտանէր, զնոյն նման զնոյն կերպարանս ձարտաւկ ձանձկէն դաեալ, եւ հանդերձ հովարտակօք եւ պատարագօք ի ձեռն մոլեկան Փիսակայն առ իշխանն յԱտրպատական առ Վարազնարձակէր.” (Գ. Ժ. :) — “Եւ այն բանին, որ վասն սրայն ի թագաւորէն տասցաւ՝ վաղվազմի յունին զօրավարին Պարսից հասանէին ի բերանայ շրիին, շրդուգն, տիրանենին եւ տիրադուգն, տիրասպանուն, տիրամանանիչն Փիսակայ, յայն յաշխարհակորսյա յաւնէ անտի... այլ իշխանն Պարսից զթշնամութիւնն զոր ունէր ի ներքոյ խորամանկեալ, ծածկեալ, մէքենայեալ, առագաւոտեալ բերեր, եւ անսէր սպաս զգաւն կատարել.” (Գ. Ժ. :) Օղինակներն յաճախելլ աւելորդէ. — ամբողջ Փաւաստուր լի է այսպիսի տեղելով, որոնք իրանք իրանց խօսում են, թէ արտահօսում են անդապէս հեղինակի, եւ այն էլ հայ հեղինակի սրայից, որի խուռն զգացմնէնէրը, անզուսպ եւ բեւակայութիւնը ուղիսորէն գուրս են թափում բառերի կուտակութիւններ, ստեղծելով բնարուս ոճ։ Այստեղ չէ նկատուամ սառն գատազութիւն, շափուած մատածուած խօսքի ձեւ, որ պէտք է լինէր այն գէպքում՝ եթէ հեղինակն աչքի առաջ ունենար իւր լեզուի ազատութիւնը կաշկանդող յունական բնագիր։ Գտուար է ենթագրել, որ կարծեցեցն յոյն բնագրի հեղինակը եւ նորա հայ թարդամնիչը երկուքն էլ դիտամեր կամ պատահաբար անկանն նախագաւառութիւններ եւ տարապայինան կրկնութիւններ գործածէին. իսկ եթէ նոյանից

մէկը կանոնաւոր ոճ ունենար՝ Փաւստոսի պատմութիւնը այժմեան լեզուական կերպարանէքը չէր ունենայ: Սխալ կարծիք է՝ թէ թարգմանիչը դիտամաբ բանեցրել է այս լեզուն, գիրքը ժաղովրդին դիւրմբոնելի դարձնելու համար: Այսպիսի մի խօսք — “քանզի սովորութեան էր Հայոց Տափառութիւն Բաղադրական անդէն ընդ նման առ նման ի նորին դափառին արէանել Բաղադրական, օրէնք էին, զի թագաւորն Պարսից եւ թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին, և մուռ բանոյու” (Դ. Ժ.): — անշուշտ աւելի գիւրմբոնելի կը լինէր՝ եթէ նստրդիր տողերը ամենեւին չկինէին. նոյնպէս վերը բերուած օրինակներից շատերը համառօտուելով՝ միայն կը վաստակէին պարզութեան կողմից: — Քննական քերականութեան հեղինակը, որ համառօտ խօսքերով այնքան հմառութեալի անդամազննել է Փ. լեզուն՝ այսպէս է եզրափակում իւր Հայեացքը նորա մասին. “Ամենայն ինչ բնական է (Փաւստոսի լեզուի մէջ), առանց արուեստի եւ արուեստականութեան, եւ հարկ է ըսել՝ հնա լոկ բնութիւն է խօսութ: Վերջապէս լեզուաւը խորին Հայկաբան, քերականական արամաբանութեամբը ճշգիւ ուտմիկ, ոճովին ամենեւին արեւելեան”¹, “օտարազգի ոճէ ազատ է:”² — Եթէ Փ. ի պատմութեան լեզուից առ համարկ պէտք լինի եզրակացութիւն անել նորա հեղինակի ազգութեան եւ սկզբնագրի լեզուի մասին մեր խորին համոզմամբ կարելի է միայն այս եղանակացնել, որ նորա հեղինակի հայ է մինչեւ իւր ուղին ու ծուծը, եւ իւր ամբողջ Հայութեան սղին թափել ցոլացըել է լեզուի մէջ, որ անդիպէս բղնում է հայ սրտից եւ հայ ուղեղից: Փ. ի պատմութիւնը, լեզուի եւ ոճի տեսակէտից, թարգմանութիւնը համարելը — չենք ասում թիւրիմացութիւն, այլ ուղղակի մեղք է:

¹ Աերածութիւն, եր. 59:

² Անդ, 124, Ծանօթ.:

Փաւստոսի պատմութեան հեղինակի եւ սկզբնական լեզուի մասին մի նոր հայեացք է յայսմում Հ. Բ. Սարգիսեանը,¹ այն է, որ “նորա հեղինակը պէտք է որ Դ. գարուն վերջերը ապրող հայ մի եղած լինի, եւ իւր գործը՝ ոչ թէ հայերէն, այլ յունարէն լեզուով շարադրած է, որուն մէջ ասպա եւ գարում, կամ թարգմանութեան եւ կամ մի ուրիշ առթիւ, անձանօթ գրչէ մը այլեւայլ եկամուտ հասուածներ ներմուծուած են”: Հեղինակի հայ լինելը բանասէր Հայրը հետեւյնում է սորանից, որ “Սոկրատ, Սոզոմէն եւ Պրոկոպիոս իբրեւ հայ հեղինակութիւն կը յիշեն այդ երկասիրութիւնը”, իսկ յունարէն լեզուով գրուած լինելը հետեւյնում է սորանից, որ եթէ յունարէն գրուած չլինէր՝ “վերցյիշեալ հեղինակներն ոչ կարգալ պիտի կարենային զայն եւ ոչ այլ անտի հասուածն մէջ բերել. եւ սակայն Պրոկոպիոս ըստ յունարէն բնագրին մէջ բերած է բոլը Արշակայ պատմութիւնն, եւ ոչ թէ ըստ բերանացի աւանդութեան կամ ըստ հայերէն գրութեան:” Որ Փ. պատմութեան հեղինակը հայ է՝ գա մեզ համար անտարակուսելի է. բայց Հ. Սարգիսեանի պատմաբանութիւնը մեզ անհամարական է թուալմ: Փաւստոս օտարազգի անսունը շատ բանասէրելի վերայ այնքան ազգել է, որ նոքա այդ զուտ հայկան գրուածքը յայն հեղինակի են վերագրել. արդ կարելիք բան է, որ յայն պատմագիրները յունարէն գրուած պատմութեան վերայ այդ միեւնոյն յայն լսաին Փաւստոս անունը անեմելով՝ նրան համարէին: Այդ հեղինակների գործածած “Հայոց պատմութիւն” բառը կարող է վերաբերուել իրանց ազբիւրի բովանդակութեան, գոյցէ եւ լեզուին, բայց ոչ Փաւստոս անունը կրող հե-

¹ Ագաթանգեզոս եւ իւր բազմագարեան գաղանիքն,

զինակի հայագլութեան։ Նոյնպէս հիմնաւոր չէ թռուում մեզ Փ. ի պատմութեան յունարէն սկզբնաշրի փաստաբանութիւնը։ Ենթագրելու համար, որ Պրոկոպիոս Փ. ի պատմութեան յունարէն բնադրից է առել իւր պատմածն Արշակ Բ. ի մասին՝ պէտք էր ապացուցանել, որ գոյութիւն ունեցել է այդպիսի յունարէն բնադրի, կամ գոնէ մանրամասն բաղդասութեամբ ցցց տալ, որ հայերէն Փաւուսուր չէր կարող ազդիր լնել Պրոկոպիոսին, իսկ քամի որ այսանից ոչ մէկը եւ ոչ միւսը չէ ապացուցած՝ աւելի հաւանական եւ բնական է կարծել, որ կամ Պրոկոպիոս ինքը հայերէն կարգացած է Փ. պատմութիւնը — քանի որ հայագէտ յոյն ուստամականներ պակաս չեն եղել. մանաւանդ որ Պրոկոպիոս ծննդեամբ կեսարացի լինելով՝ դիւրաւ կարող էր յարաբերութիւն ունենալ Հայոց հետ, — կամ ուրիշ նորա համար թարգմաննել է Փաւուսոից հատուածներ։ Սոկրատի եւ Սովոմինի մասին չենք խօսում։ Դեռ պէտք է ապացուցանել, որ նոքա Փ. ի պատմութիւնից օդառելել են, այնուահետև միայն կարող է ինսդիր լինել, թէ ինչ լեզուով է եղել նոցաձեռքի տակ եղած Փաւուսոի բնադիրը։

Նորայր Բիշանդացու կարծիքի վերայ — որ Փ. ի մէջ նկատելով՝ մի կողմից խիստ անպարկեշտ տեսարաններ եւ միւս կողմից ծայրայել բարեպաշտութիւն, երկու հեղինակ է ենթագրում այդ պատմութեան, մէկը լիտիաբան յոյն աշխարհական, միւսը բարեպաշտ ասորի եկեղեցական, — երկար կանգ առնել հարկ չենք համարում։ Այդ երկու, ըստ երեւութիւն անմիաբանելի յատկութիւնները դիւրաւ կարող են միանալ մի պարզամիտ, դիւրահաւան ՝ բնութեան որդու» մէջ, որպիսի տիպեր շատ բազմաթիւ են մեր գիւղական դասի մէջ, որոնք ամէն մի անպարկեշտ բան իւր անունովն են առուց

¹ «Քննառէր», 1887, Ա. եր. 28—29 եւ յոշ.:

նոյն իսկ կանանց եւ երեխաների ներկայութեամբ, եւ այնքան պարզամիտ են, որ չեն եւ կարող երեւակայել, թէ կայ խօսքի վայելութեան չափ, կամ իրանց ասածը կարող է վերաւորել մէկի ողջախոչհութիւնը։ Փ. ի պատմութեան հեղինակն եւ այս տիպերիցն է, որ շատրւաւ նկատուում է անպարկեշտ տեսարաններին կարագրութեան ողուց։ Կա ոչ թէ ցոփաքան է, ոչ թէ հեշտափական երեւակայութիւնից է մղուում անպարկեշտ գէպքեր պատմելու, ոյլ հէնց բարեպաշտական զգացմանքից գրգռուած պարաւում է այդպիսի գործերը։ Նորա գրածը ընթերցալի մէջ չէ շարժում ուրիշ որեւէ զգացմունք՝ քան հիացում այդ անմեղ, պարզամիտ հոգ վերայ, որ «ոչ զիսէ զի՞նչ գործէ»։

Մէնք հարկ համարեցինք այս համառատ տեսութիւնը նույիրել՝ Փ. պատմութեան, լեզուի, գրութեան ժամանակի եւ հեղինակի աղդութեան մասին եղած զանազան կարծիքներին, քանի որ դոքաս ամբողջական քննութեան չէին ենթարկուած եւ ներկայացնում էին ըստ երեւութիւն բաւական ծանրակշեռ, միեւնաց հետ սերտ կապակցուած հիմքեր՝ այդ պատմութիւնը Դ. գարի յոյն հեղինակութիւն համարելու։ Մէնք ջանացինք ցցց տալ, որ այդ հիմքերը խախուտ են, — որ բաւական փառաեր չկան այդ պատմութիւնը Դ. գարում գրուած համարելու, որ նորա հեղինակը՝ գրքում լիշտած Փաւուսո հոռոմ եպիկուզոսը չէ, որ նա չէ գրուած յոյնարէն կամ ուրիշ օտար լեզուով։ Այժմ կը գտանանք այս ուստամակիութեան երկրորդ մասին եւ կ'աշխատինք ապացուցանել, որ այդ պատմութիւնը գրուած է Ե. գարի կիսին, հայի ձեռքավ եւ հայերէն լեզուով, այսինքն յինդ հանուրն այնինչ որ համառատիւ ծրագրել է Հ. գամթըրմեանը մեր արդէն յիշած հատակոսում։

¹ «Հանդէս ամսօրեայ», 1889, մարտ :

/

Բ.

Փառատուի բանարադրոթիւմները Ե. դարի հայերէն գրուածքներից — Ականարկոթիւմների Ե. դարի անցքերի վրայ. — Անտեղեկոթիւմներ ժամանակագրութեան. — Հրաշքեր, առանդութիւմներ, վիստական տարր. — Հեղինակի ազգային ոգին. — Եզրակացութիւննե:

ԵՇԵ մի կողմ գնենք վերսիշեալ կարծիքները, որոնք հիմնուած են Փ.ի պատմոթեան մի քանի կասկածելի եւ առեղծուածային տողերի մսալ բացատրութեան վերայ, եւ առանց նախառեալ կարծիքի քննենք այդ պատմոթեան բովանդակութիւնը՝ բաւականաչափ ուղղակի եւ անուղղակի այնպիսի ցացումներ կը գտնենք նրա մէջ, որոնք մեզ ուրիշ եղբակացածոթեան կը հաշցնեն այդ պատմոթեան գրութեան ժամանակի, հեղինակի ազգութեան եւ սկզբնադրի լեզուի վերաբերութեամբ:

Անձանօթ հեղինակը խոստաբանութեան մէջ յայտարարելով, որ պէտք է սկսէ խոսրավ կոտակից եւ Վըժանէս կաթողիկոսից. Գ. ա. գլխում բացատրում է, թէ ինչն է սկսում այդ պատմական կէտից. — որավշեանեւ, առում է, “Սանաւարուից եւ Թագէոս առաքեալից մինչեւ Տրդատի Եւ Ս. Գրիգորի գործերն ու մահը ուրիշների ձեռքով արդէն գրուած են: Բայց որպէս զի մեր պատմութեան մէջ բնդհատում չլինի, այլ մի կազ հաստատուի (նախընթաց գրուածքների եւ այս պատմութեան մէջ) համառօտակի նշանակում ենք,

ինչպէս թէ մի աղիւս զետեղելով պատի շնուռ թեան մէջ:” Եւ յիրաւի, յաջորդ գլխում (Գ. բ.) հեղինակը մի քանի խօսքերով յիշում է Տրդատին, Ս. Գրիգորին եւ նորա գործակից Արիստակէսին, նոցա մահն ու թագումը, եւ այնուհետեւ, Գ. գլխից, անցնում է իւր բուն պատմութեան, Խոսրով կոտակից ու Վըժանէսից սկսելով:

Հեղինակի այս ծրագիրն ու բայցատրութիւնը ցայց են տալիս, որ նա ունեցել է ձեռքի տակ “առաքելապանն”, Սանաւարուիկի եւ Թագէտուի, “յակամայից քրիստոնէութիւն բնդունածն” Տրդատի եւ Ս. Գրիգորի վարդապետութեան ու գործերի պատմութիւնները, ուստի ինքն աւելսրդ է համարել նորից զրել այն ինչ որ արդէն կայ. այլ արժան է գտանել սկսել իւր պատմութիւնն ուղիղ այն տեղից, որտեղ կանգ են առել իւր նաև խորդները: Այս նախընթաց պատմութիւնները թէպէտ հեղինակից յանուանէ չեն յիշուռում բայց բարեբախտաբար յայտնի են մեզ: Առաջինն է Վկայաբանութիւն Թագէտոսի առաքելցն: Երկրորդն է Վկաթանութեղոսի պատմութիւնը: Այս երկու պատմութիւնները հեղինակը ոչ մայն գիտէ, այլ եւ օգտուում է նոցանից՝ իբրեւ աղքիւրներից, առաջինից քիչ տեղ², իսկ երկրորդից շատ անգամ:

¹ Սովորը, լ: Այս վկայաբանութիւնը խմբագրուած է Կարուբնայի պատմութեան հայերէն թարգմանութիւնից յետոյ, որովհետեւ յայտնապէս օգտուում է նորանից, երբեմ բառացի հատուածներ խոր փոխ առնելով նորանից: Խմբագրուած է Ե. գարի առաջին կիտում, որովհետեւ Փաւասոսի հեղինակը նրան գիտէ: Խորենացին եւս նրան գիտէ եւ բառացի հատուածներ է փոխ առնում (Բ. լւ, լլ): Խմբագրովն իրան կոչում է “թարգմանիչ”, Սամուէլ երիսկոսուս որին հրատարակինքներուն ուղիւարնում են Հմտէւ կաթողիկոսն հետո: Սովորը, եր, եր. 101. ծան. 27:

² Փաւասո. Գ. մդ. “Սական եւ գուք յայնմ” փախանակ երախտեացն . . . կոչէր ի փրկական շնորհս արբառութեան Ծեառն մերց Յիսուսի Քրիստոսուից. եւ մի քանի անգամ Հայոց հայրապետութիւնը կոչէրով “ամթոն” եւ վիճակի Թագէտոս առաքեալ: — Գ. մդ. մդ. Գ. գ:

Այս երկրագիր, այսինքն Ազաթանգեղստի առլինչութիւնը Փ.ի պատմութեան հետ՝ առանձին կարեւութիւն ունի մեզ հետաքրքրութիւն կազմի համար, ուստի արժէ նորա վերայ կանգ առնել:

Որ Փ.ի հեղինակն անպայման օգտուել է Աշ-Բանդէլուից՝ երեւում է այն բազմաթիւ կարեւոր եւ երկրագիտական տեղեկութիւններից, որ նա աւանդում է համաձայն Ազաթանգեղստի Այսպէս նա դիտէ, որ Սասանեաններն սպանել են Արտաւանին, որի պատճառով հայ Արշակոնինները վրէժինդիր են եղել նոյնակից (Գ. ծդ. — հմանլ. Ազաթ. ա, բ) որ Ս. Գրիգոր Անակի որդինն է (Գ. բ — Ագ. ժա). որ նա չարչարուել է Հայերից քրիստոնէութեան պատճառով (Գ. ծդ. — Ազթ. զ. — ժ). որ Գրիգորի չարչարանքներից յետոյ եկել են Հռիփիմեանք, չարչարուել են եւ նաև հատկուել (Գ. ծդ. — Ագ. ժդ. — ժթ.). որ թագաւորը անասնական կերպարանք է ստացել, որ եւ առիթ է եղել Հայոց գարձին (Գ. ծդ. — Ագ. ի). որ Ս. Գրիգոր քարտուղել, վարդապետել է Հայոց (Գ. ա, բ — Ագ. Վարդապետութիւն եւն). որ Քրիստոսի նախավկանների, Գայիանէի, Հռիփսիմէի եւ նոյս գործակիցների վերայ վկայաններ են շնուել Այրարատեան գաւառում (Գ. ծդ. — Ագ. ժդ.). որ Ս. Գրիգոր առաջին կաթողիկոսն է եղել Հայոց (Գ. ժ. — Ագ. ժժ. ժժ. յառաջ). որ առվարդութիւն է եղել՝ կաթողիկոսութեան ձեռնադրութիւնը կեսարիայից ստանալ (Գ. ժբ. Ե. իթ. — Ագ. ժժ. ժժ. ժժ.). որ Ս. Գրիգոր պահնչելիքով կործանել է մեջեաններ Տարօնի Աշտիշատում (Գ. գ. Գ. գ. — Ագ. ժժ. ժժ. ե). որ նա այսուղ է

¹ Փ.ի եւ Ազաթանգեղստի բովանդակութեան համատեսնը առաջ է Հ. Յաշեան, “Ազաթանգեղստ”, էր. 151—155: — Յարգելի բանասէրը սակայն Փ.ի տեղեկութիւնները Ազաթանգեղստի անկախ համարում. էր. 110. իսկ եր. 79 Ազաթանգեղստի համարում է բանագաղ Փաւասոսից:

շնել առաջին եկեղեցին Ս. Յովհաննէսի անսւանով (Գ. գ. ժդ. եւն — Ագ. ժժ). որ այսուեղ մկրտառութիւն է կատարել եւ ձեռնադրութիւն է արել (Գ. ժդ. — Ագ. ժժ). որ պատուիրել է՝ առարկ ցարի այսուեղ տօնել որբերի յիշատակը (Գ. գ. ժդ. Ե. ժ. լա. — Ագ. ժժ). որ Տրդատ եկեղեցուն նուիրել է կալւածներ, եօթը-եօթը հոլ (Գ. ժդ. Ե. լա. — Ագ. ժժ). որ Ս. Գրիգոր քաշուել է անապատ ձնելու (Զ. ժդ. — Ագ. ժի). որ նա ունեցել է երկու որդի, Վրժանէս եւ Արիստակէս (Գ. բ. գ. — Ագ. ժի). որ կրտակը Ս. Գրիգորից ձեռնադրուել եւ գործակից է եղել հօրը (Գ. բ. գ. — Ագ. ժի). որ Տրդատ եւ Կոստանդիանոս գաշնիք են դրել (Գ. իա. — Ագ. ժի). որ հրեշտակն սպասարուելս է եղել Կոստանդիանոսին (Գ. ժ. — Ագ. ժի). որ Նիկիոց ժողովն է գնացել Արիստակէս, Ս. Գրիգորի որդին (Գ. ժ. — Ագ. ժի):

Եթէ ինկատ առնելու լինինը, որ Փ.ի հեղինակը ոչ թէ Լուսաւորչի պատմութիւնն է ուղղում գրել, այլ գանազան առիթներով եւ տեղերում հարեւանցի է յիշատակութիւն առում նորա մասնին՝ ատակայս այլ եւս չի մնայ, որ նա ծանօթ է Ազաթանգեղստի պատմութեանն ամբողջապէս, այն պարունակութեամբ՝ որ ունի մեր ձեռքն հասած խմբագրութիւնը, որի զբեթէ բոլոր մասերից ծայրագաղ տեղեկութիւններ է հաղորդում:¹

Փաւասոսի եւ Ազաթանգեղստի մէջ եղած առնչութեան վերայ ուշագրութիւն է դար-

¹ Հակառակ ենթադրութիւն անելլ, սպանիքն թէ Ազաթանգեղստի խմբագրովն է օգտուել Փաւասոսից՝ անկարելի է, քանի որ Ազաթանգեղստի մէջ այս տեղեկութիւնները շատ մանրամասն են, եւ միմեանց հետ կապակառած գրուած, եւ քանի որ Փ.ի հեղինակը վկայում է, թէ իրանից թիւնը.

Ճրել եւ Հ. Բ. Սարդիսեան¹: «Նա բաւական կէտեր համեմատել է Ագաթանգեղոսի եւ Փ.ի մէջ, որոնք բովանդակութեամբ, երբեմն նպանիսիլեղուի դարձուածներով նման են միմեանց, եւ եղակացրել է, որ Փ. Բիւզանդացին օգտուել է Ագաթանգեղոսից: «Իսկ որովհչետեւ ֆաւասոսի երկասիրովինը... յունալէն գրուած էր՝ ուրեմն պէտք է եղակացնել, թէ Ագաթանգեղեայ դիրքն եւս պէտք է որ յունարէն լեզուով գրուած լինէր... թէպէտեւ եկամուտ յաւելուածներու պատճառաւ բոլորը մին ատրեպեր երեւոյթ առած կը տեսնուի այժմ:» Ուրեմն բանասէր Հօր կարծիքով՝ Փ.ի հեղինակն օգտուել է Ագաթանգեղոսի նախնական յոյն բնագրոց: Սակայն այս կարծիքն անընդունելի է մի քանի պատճառներով: Կախ՝ որովհչետեւ Ագաթանգեղոսի հայ խմբագիրը ձեռքի տակ չէ ունեցել յունարէն ամբողջ Ագաթանգեղոս, այլ երեք կամ տեղի անկախ գրուածքներ, որոնցից ձույլ կազմել է հայերէն Ագաթանգեղոսը.² ուշը մեն եւ Փ.ի հեղինակը չէր կարող ունենալ յունարէն ամբողջ Ագաթանգեղոս, այնպիսի բովանդակութեամբ ու ծաւալով, որ ունի այժմեան հայերէնը: Երկրորդ՝ եթէ ընդունենք իսկ Հ. Բ. Սարդիսեանի կարծիքը այսպիսի նախնական յունարէն

¹ Ագաթ. եւ իւր բազմագար. զազոնիքն, եր. 297—301: — Ե. Վ. Գուցչեանում՝ է ասել, թէ արդեօք ծանօթ է եղել Փաւասոսին Ագաթանգեղոսու: «Նա բերում է երկու նման համուածներ այս երկու պատճագրից, սակայն նոցանից առաջնը կայ եւ Կորինի մէջ, իսկ երկորդը Ս. Գրքից է վերցրած (եր. 33—34): — Ա. Գարագաշեան կազմ չէ գտնում այս երկու պատճագիրների մէջ. Նա Բի զանդացուն համարելով աւելի հինքան Ագաթանգեղոսու, «ուստի եւ աւելի ազատ հետպահեաէ ատրածուած կայացրանութեանց ազգեցութենէն» (Քնն. պատմ. Գ, 369) նորանով շարունակ ուղարկ, հաստատում կամ հերքում է Ագաթանգեղոսին: Այսպէս վարուել են եւ ուրիշ բանաւերներ:

² A. von Gutschmid, Agathangelos. Kleine Schriften, III. B., 357—371, 375—379: — Հ. Յ. Տաշեան, “Ագաթանգեղոսուն”, եր. 133:

Ագաթանգեղոսի գոյութեան մասին, որ կազմուած է եղել չորս առանձին նիւթերից՝¹ գարձեալ կը տեսնենք որ Փ.ի հեղինակը չէր կարող այդ յունարէնից օգտուած լինել, քանի որ Փ.ի եւ Ագաթանգեղոսի մէջ եղած նմանութիւնները մեծ մասամբ չայց գարձի պատճնութեան մէջ են գանրւում: իսկ Հայոց գարձի պատճնութեան մեծագոյն մասը, նպան բանասէր Հօր կարծիքով, հայ թարգմանչի աւելցուածն է,² ուրեմն եւ չէ եղել ենթագրուած նախնական յունարէն Ագաթանգեղոսի մէջ: Այսքանէս երրորդ՝ որ Փ.ի եւ Ագաթանգեղոսի մէջ նմանութիւնները ոչ միայն բովանդակութեան եւ ոչի կոդմից են, այլ եւ լեզուի, երկուսի եւս բառացի կրկնուող հատուածների մէջ: Անկարելիք է ենթագրել, որ Ագաթանգեղոսը եւ Փ.ի յունարէնից փախագրուելով կամ խմբագրուելով՝ պատահաբար պահպանէին այդ բառացի նմանութիւնները հայերէնի մէջ եւս: Աւելորդ չենք համարում մէջ բերել այդ հատուածները գէմ առ գէմ, որոնք շատ պարզ ցոյց կը տան այս երկու պատճագիրների առընչութեան աստիճանը:³

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (տպ. Թիֆլ. 1882): ՓԱՀԱՑՈՒ (տպ. Վենետ. 1889):

1. “Պահովը ձգել պահով յօրն էր գործակից... վախ յօր իբրաւուսուն վախուն մանին” (եր. 406):

2. “Եւ եղել քողով բարձր եղելու առաջնորդ կը մասնաւուածն եւ կուսական արքայութեան պարիսու” (467):

3. “Եւ բարձր բարձր ի առաջնորդուածն եւ անաց եւ առաջնորդուածն ի առաջնորդուածն եւ անաց” (73):

1 Ագաթ. եւ իւր բ. գաղտն. եր. 265 եւ 289—313: 2 Անդ. եր. 267:

3 Օրինակներից առաջնի չարու համապատասխան նաև Հ. Բ. Սարդիսեանի յիշեալ աշխատութեան մէջ, եր. 299—300. իսկ հինգերորդը՝ ինչպէս նորա նոյնպէս եւ Ե. Մ-ի աշխատութեան մէջ, եր. 34:

տագնապելց ի բանաւորաց բէ-Ն Եւ գերեդարձ առաջեր,
Քի-Ա-Բէ-Ն արքու, կորզելով զորս աճի - ուրուս-Եւան
զնուածաւահաւարութեամբ զօ- կութեասր փաւացն Քըին-
առին, (486):

4. “Եւ հոգամյեաց իւս-
տաբեւ անդ ամ յանձ ի տեղ-
ող գործված ամենեցուն է
յիշարու որբանց ։ ։ ։ զի ինք-
նու մը քարոզված առ ուսնին
իշխանութեան” (472):

5. “**Զաւետարանական**
ընթացուն եւ զիկրալիցու-
թիւնն եկեղեցւց սրբայ՝ չնոր-
հօք Աստուծոյ առանց պա-
կասութեան տանէր. եւ ա-
ռաւել՝ ութիւնք գուն եւ
գեալ զամենայն որ յոր-
դորելով առ ի բարեացն
քաջակերութիւն։ Զայդ
եւ զցերելի պահօք եւ ա-
ղօթիւք եւ ուժգին խնդղ-
րուածովլը եւ բարձր բար-
բառովկը զամաստած աղիք
պատուիրանայն լշարաննամ
յուշ առնելով՝ զգուշա-
ցուցանէր ամենայն մարդոյ”
(508)։

6. “Եւ եղ անդ զշիմունս
եկեղեցւոյն եւ ուղեաց
սեղան փառաց Քրիստոսի:
Զի՞նո՞ւ անդ արբ օհիո՞նին
շնությ է եղեցւոց եւ սույնել
սեղան յանուան սուրբ Երրորդ
դութեանն,” (472):

7. "Ամանաւանդ" վասն
աստուածածնովթալթեան
նորա առաւել՝ բաշխու իւեր
ընդ նմա, Քինորդ կալեալ
զհաւասան որ ի տեր քրիս-
տոսն էր, (504):

8. "Եւ բազմացնելու հայոց
ականական եղիսակութածութեա-

Ական եւ գերեղարձ առաջեր,
զորս ահի- տուող-թեան
իւրաքանչ պատրաստեն (78):

"Ճառագլւղթ է յեւնաբան ու ըստ
բացի որ էին անդ, կապահքեւ
անդ ամ ամ էօթն անդամ...
ամի ամի ի շատրվածից՝ զօր ոօ-
նին... ի բերեւ անդամնեն, (7):

“ Զաւետարանիկան ընթացն եւ զվերակացութիւն եւ եկեղեցւոյ սրբոյ շնորհօքն Աստուծոյ առանց պալկառութեան տանէքը, առեւել եւս փուռթայր գտնեալ յորդորելով զամենսեան առ ի բարեացն քաջայրութիւն. զցայդ եւ զցերեկ պահօք եւ ազօթիւք եւ ուժգին ինսկը բռուածովք եւ բարձրակալ կատարման հաւատովքն եռմանքան ածեր:

"Օռտեսան յիշեալ ուստ
շանց կուելը . . . գիւղուրու-
թեամբ ի մեջ կայսերն կոս-
տանդիանոսի եւ ի մեջ
թագաւորին Տբդատայ ե-
ղեալ եր, (55):

“Ե- Բազմոցից զկարգ պաշտօնէից յամենայն ուժն

Հայոց բարեկարգ համար կատար ի սահմանացն Հայոց, և յահենայն բարեկարգ պատճենը կատար ի սահմանացն (219):

9. „Ապահովակ-է և օգնու-
թեալք, անելուզ+ վարչու-
թե մուտքինօք լուցելովկ եւ
ջահիւք բռըբայիլովք մէջ-
լիջմութեամի՞ եւ բնա-
զուարթութեամի՞” (481):

“Համնդերձ ասկուսու-+ եւ
օգնութեալք, անելուզ+ վա-
րչութե մէջ-[-]պաշտ-
մամի՞ եւ բնա-լութ յիշասա-
կը զսութեան յուղարկեցին”
(223):

Զանց ենք անում մէջ բերել ուրիշ համեմատութիւններ Ազաթ. ի եւ Փ. ի այն տեղերից, որոնք միմեանց նման են ոչ թէ բառերով, այլ ոճով, բավանդակութեամբ եւ նիւթի դասաւորութեամբ.¹ Վերը բերուած համեմատութիւններն եւ բաւական են համոզելու, որ Փ. ի հեղինակին օգտառել է Ազաթանդեղափ հայեցէն խմբագրութիւնից:

Փ.ի պատմութիւնը պարունակում է հաւատուածներ նաև Կոբենից : Այստեղ ուր հեղինակը պատմում է Ս. Յակով Հայրապետի վերադարձը, տապանից մասն ստանալուց յետոյ (գ., ժ.), նա բառացից, համառօտ կրծառութեալ կրկնում է Կոբենի պատմութիւնը Ս. ՄԵԿՐՈՎԱՅԻ վերադարձի մասին, գրեթի զիւտից յետոյ : Ահա՝ այդ հատուածները :

ւ Այսպէս են, օր. այն ձորակի նկարագութեանը
որ տեղ Հայոց առաջին մկրտութիւնը կատարուեցաւ
նկամ. ձեզ—ձեւ = Փ, Գ, Ճ. Յակին աղքերն
զմբրութիւն զօրացն բաղացնց. Ա. Գրիգորի գործունե-
ութիւնը Աշտամանքեզսի մէջ եւ. Ս. Կերսեսինը Որի մէջ
(Ազ). Ճեմ—ճի = Փ. Գ, Ճ. Քաղաքացոց ցաներ զպաշտո-
ւայսոց — գերեւարձ առնելը; Առ. Հասարակ նկատութեամ-
է, որ Փ. Ս. Կերսեսի ճեմանդարձութեամ եւ գործունեամ-
թեան գլուխը (Գ, Ճ). Քայլ առ քայլ հետեւում է
Աշտամանքեզսին, իրան օրինակ առնելով. Ս. Գրիգորի
ճեմանդարձութեան եւ գործունեւութեան նկարագիրն այս
պատճենութիւնից:

ԿՈՐԻՒՆՆ (տալ. Վեհսեա).

1894)

ՓԱԽՍՏՈՒ

1. “Հայոց (առնպր) թուղթս աւետագիրս համար դեմք շորհ հարդարութ պարբետածու, եւ ամենայն իրացունքն, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհութ ինեւը (Եր. 20: 20).

2. “Եւ ոչ այնպէս մեծն Մասկէս զուարձանայր յէջս Սինէական լերինն. չասեմք թէ առաւելըն պակասագոյն: Քանի վանդի յԱստուծոյ առեալ եւ աստուածոքի հրաման ի բարուկս այն աստուածատես, ի լեռնէն իջանէր, այլ վասն վրիժագործ ժողովրեանն, որոց թիկունք ի տէրունեան, եւ կործան յերկիր, տիրագրութքը յիւրեան կուռաց երեւանց կուռան ձուլածուն երկիր պագանէին, եւ զորին հրամանաբերն սրտառուչ սրտարեկ կացուցին. քանդի ի տախակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր ըեւըլոյն թախտութիւն: Իսկ այսօն երանելոց, վասն որոյ ձառեալքը յարգարին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդն գործեցան, այլ ինքն իւլով լրեալ հոգեւոր միմիթարութեամք կարծեալ զընդունելոցն թախտութիւն: Իսկ այս երանելոյս, վասն որոյ եւ ձառեալքը յարգարին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդ գործեցաւ, այլ ինքն իւլովին լրեալ հոգեւոր միմիթարութեամք կարծեալ զընդունելեացն զյօժարութիւն յուսով զիտառութիւն յուսով զիտառութիւն զընանապարհացն աւետարերը (20-21):

3. “Քանդի եւ չիայ ինչ ի վերաբ յայտնես եւ ժամանակական կամաց զաստուածականն իսուտել: Քանդի միջն Աստուծութեացն շնորհեաց առ առ ամենայն առջու երբեմն շնորհեացն ամուսնութիւնն ամուսնութիւնն (անդ):

“Եւ առեալ դառնապը անտի, հանդեք շնորհարութ պարբետելուն, եւ որը ընդ նմացն երթեալք՝ իրացն ճանապարհութ ինեւը (Եր. 23:).

“Եւ ոչ այնպէս մեծն Մասկէս զուարձագործ յընձայր յէջսն Սինէական լեռնէն, չասեմք եթէ առաւել երական պակասագոյն: Քանի վիլֆն պակասագոյն: Եւ ոչ այն յԱստուծոյ առեալ եւ աստուածոքի հրաման ի բարուկս այն աստուածատես, ի լեռնէն իջանէր, այլ վասն վրիժագործ ժողովրեանն, որոց թիկունք ի տէրունեան, եւ կործան յերկիր, տիրագրութքը յիւրեան կուռաց երեւանց կուռան ձուլածուն երկիր պագանէին, եւ նովին զընանաբերն սրտառուչ սրտարեկ կացուցանէն: Քանդի ի տախակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր ըեւըլոյն թախտութիւն: Իսկ այսօն երանելոց, վասն որոյ եւ ձառեալքը յարգարին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդ գործեցաւ, այլ ինքն իւլովին լրեալ հոգեւոր միմիթարութեամք կարծեալ զընդունելեացն զյօժարութիւն յուսով զիտառութիւն յուսով զիտառութիւն զընանապարհացն աւետարեաց” (անդ):

Հենայն արքու երիբաժնաց յառագութէն (21):

4. “Ոլում զարբետեր իս: Այս կը հանաց հօրն եւրոյ վեհական յարդարանին լուսաւութ հայրական լուսաւութ յաջորդէր, հայրական լուսաւութ արանչի աջակը իւրովն ապա լուսաւութ արանչի աջակը իւրովն (19: Կայն հաստածը կայ ուստեղ զնորհացն կատաւ լգաթանգելապում բէրը (30): Ճանապարհութ էր կատաւ, եր. 479):

Տարակոյս չկայ, որ այս երկու հեղինակներից Փաւաստոն է բանապազլ Կորիւնից: Սա երեւում է շատ նշաններից. — Ա. Փաւաստոի մէջ համեմատուած հաստածները կրամա են, իսկ Կորիւնի մէջ լիակատար, առաջն երեր հաստածները Փ.ի մէջ միւմանց յաջորդում են անմիջապէս, այն ինչ Կորիւնի մէջ նորա միմեանցից բաժանուած են կարբեւոր եւ միտքը լրացնող հաստածներով: Երրորդ հաստածը Փ.ի մէջ անյաջող կրամատումի պատճառով անհասկանալի, զբեթէ աղաւազուած է թուում, եւ նախօնթաց երկրորդ հաստածին հետ ամեննեին չէ կապուում. այն ինչ Կորիւնի մէջ այս հաստածն իմաստ ունի եւ լաւ կապուում է հեղինակի նախօնթաց մաքին հետ, որ Փ. գուրս է ձգել: Բ. Ա.յս հաստածները ոճի մթութեամբ, լեզուի ծանրութեամբ բալրովին Կորիւնին են յիշեցնում եւ խիստ հեռու են Փ.ի պարզ, բայց յայտ լեզուից ու ոճից: Գ. Երանելի բառը, որ պատճում է համեմատուած հաստածում Կորիւնի սովորական, յաձան գործածամծ բառն է Ա. Մեռութափի համար. այն ինչ Փ. այս բառն ուրիշ անգում չէ զարդածում Ա. Յակովի համար: Դ. Սո-

1. Կայնպէս ակնյացնի նմանութիւն կայ Ա. Սահակի եւ Ա. Կերսէսի մասնաւն եւ թաղման նկարագրութեան մէջ, ակսեալ Ա.Տէր Յիսուս, ընկալ զնորդի իմը իսուպերից (Կորիւն 41-42 = Փ. Ե. իդ). Ա. Անսորփի եւ Ա. Վրթանէսի մէջ (Կորիւն 45 = Փ. Գ. ժա):

վորութիւն չունի Փ. իւր պատմական անձնաւորութիւններն ու դէպքերը համեմատել Ա. Գրքի անձնաւորութեանց ու դէպքերի հետ. այն ինչ կորիւն այս սովորութիւնն ի չարն է գործ դնում:

Ասածներից հետեւում է, որ Փ.ի հեղե-
նակն օգտառել է Նայնակն Կորիւնի պատմութիւնից:

Ալրէն Նորայր Բիւզանդացին ցայց է տուել, ²
որ Փ.ի Հեղինակիլ Ա. Ներսէսի ձեռնադրութեան
ժամանակ պղաւնի իջնելու պատմութիւնը յար-
մարեցրել է Եւ-Ելիոսի պատմածից Փեքիանոսի
մասին։ Մեզ համոր Հետաքրքրական լինելով
գիտնալ, թէ ալրէնօք յսւնարէն Եւսեբիոսից է
օգտուել Հեղինակիլ, թէ Հյոյերէն թարգմանու-
թիւնից՝ մշջ կը բերենք այդ հատուածն երկուսիցն
եւս։

ԵԽՍԵԲԻՈՍ, (Եկցիկն. պատմ.)

$\phi \cup h \cup S \cap U$

“Յանկարծակի իրրեւ ի
բարձանց թռուցեալ ու-
ղանէի մի, եւ եկն հանդիւս-
է Աբայ հիւոյ նորո, եւ եցցց
զօփնակ զայնը հոգւոյ, որ
“իշլ աղանի սպիտակ ի
վերայ սեղանայն... Երեւա-
նանի ի սեղանայն եւ
հանգն է Աբայ նորո...”

չ Գիտնական գիտաբեր, որ առաջնին անդամ համեմատել է ընդարձակ հաստաւած երկու Հեղինակների մօմ ուրեմն կարծիքի է՝ նոցա քանաքարութեան քարպերութեամբ։ Կա համարում է, որ «Փաստառոսին Նկատումներ» կորին է վիճա առնողութ որոյին հետեւ այս նմանութիւնն յացնապես աւելի լաւ կը յարմարի Յակոբյա Մծրնացց վրայ, որ ըստ Փաստառոսի Սարարտու իւռան է կ'իջնայ, քանի Մերորոպա, որ ըստ Կորեան Միջագետքէն կու գայու, (Հայկ աշխատափառութիւնք, եր. 81): Եւնք կը նկատենք, որ ընդ հակառակն աւելի փայելուշ եւ բնական է Ովովեսին համեմատել Ս. Մեսրոպին հետ, քանի որ առաջնին ստուածանուր պատասխան բերեց ժողովզին, իսկ երկրորդը՝ ստուածանուր գորեր, որոնցով նոյն պատասխաներութ մարդանուեցան, եւ քանի որ երկուսի բերածներն ել միեւնոյն նպատակին են ծառայում՝ կը թէ եռու ժողովիդի միաբն ու բարյացականութիւնը: Ովովեսին եւ Ս. Յակոբի ընանից իշնելու արքատին նմանութիւնը՝ միայն սիմիծ է տուել Փ. ի Հեղինակին այս հաստաւածն արտաքիրելու Կորինից: — Տես եւ Արքան Բարձրը. Ա. Ենեա, եր. 49:

² "Քննասեր," Ա. 37-38:

“Քննասեր”, Ա. 37-38:

բատ նմանութեան մարմայ
աղաւնոյ էջ հանգեաւ ի
վերայ փիկին մերց: Եւ-
խոսլիցաւ ու հաստատէ ու
մեռայ ժամանակը եւ ուղա-
ղուին վաճառքութեաւ ասկին,
թէ Արմանի է գա: Եւ
նոյնժամանցն ութիւն եւ նշա-
ռաւցին դու յանիւս եղանիսոյու-
սութեանն: (Զ. իթ, եր.
478):

Զնայելով որ Փ.ի հեղինակը Եւսեբիսոսի
անպամանց, գտնցէ բնական դիպուածի պատմու-
թիւնն ընդարձակել ու զարդարել է այնու ամե-
նայնին այդ երկու հատուածի մէջ յայտնի երեւ-
ում է Եզուի եւ բառերի մեջ նմանութիւն, որ
մեզ թոյլ է տալիս եզրակացնել, թէ Փ.ի հեղի-
նակն օգտառել է նոյնպէս Եւսեբիսոսի Եկեղ. պատ-
մութեան Հայերէն թարգմանութիւնից :

Փ. ի հեղինակը խիստ յաճախ օգտառում է
եւ Ա. Գրիչյ, թէ բառացի հաստատներ մէջ բե-
րելով եւ թէ Ա. Վրբի խօպերով իւր պատմու-
թիւնը հիւսելով, ինչպէս արդէն նկատուած է
ուրիշներից: Երկու գէպքումն էլ Փ. օգտառում է
է Ա. Գրբի անպայման հայերէն թարգմանութիւնից:
Օրինակներն այնքան բազմաթիւ են եւ քաջա-
ծանօթ, որ հարկ չենք համարում երկարել այս
մասին: Նկատենք միայն, որ Դանիկէլ մարգարէւ-
թիւնից մի ընդարձակ հաստած — “Յիշաւուն
անցուցեր գու զայտ ամենայն ընդ մեզ... որ փա-
ռաւորեալդ ես ի վերայ ամենայն տիեզերաց”,
(Դանիկէլ Գ, 27—45 = Փաւատ. Ե, գ.) — հե-
ղինակը մէջ է բերում Հայոց ժամանակի ընթեր-
ցուածքի համաձայն, որ բաւական տարբերու-
թիւններ ունի Ա. Վրբի ընթերցուածքից:¹ Յիշաւուն

Եթեց մանկանց այս պիտառձևի օբյեկտը թիւնն ամ-

նոյնպէս, որ համաձայն Հ. Գալթըքճեանի վկայում՝
թեան Փ. ի հեղինակն ընդարձակ չափով օդ-
տուել է նաեւ Ա. Բաբոնի պատառ անձաւոց յշէ
հայերէն թարգմանութիւնից եւ ակու առաջ մեզի
առ թարգմանութեան վրայ համառօտած պատկեր
մը, որն որ մեր հայ օրինակներուն հետ այնչափ
համեմատ կ'ելլէ. այնպէս որ շատ անդամ կ'ուղղէ
իսկ մեր հիմակուան օրինակները։»

Վերսիչեալ բարդատութիւններից տեսնում
ենք, որ Փ. ի հեղինակը յայտնապէս օդտուել է
— Ագաթանգեղոսից, Կորիւնից, Եւսեբիոսի Եւ-
կեղեցական պատմութիւնից, Ա. Գրքից, Ժամա-
գրքից, Ա. Բապտի պատարագամասպայիցից, որոնք
բոլոր դրուած կամ թարգմանուած են հայերէն
բազուով և գարի առաջին կիսում եւ հանում
են մինչեւ Ե. գարի կիսավայրը (Կորիւն, Ագա-
թանգեղոս): Սորանից բնականապէս եղբակացնում
ենք, որ Փատոպոսի պատմութեանը է իրող և իրուստ
լինել ու վաղ ժամ ճնշերորդ դարէ Երիտրիէ իւսէ
սկզբներում, հաւանորէն Ագաթանգեղոսի հայերէն
խմբագրութիւնից ոչ շատ յետպ, որի շարունա-
կողն է հանդիսանում: Աւելի ուշ ժամանակի
գրուածք չենք կարող համարել նրան, ի նկատ
ունենալով լեզուն, որ սովորէն շրջանին է պատ-
կանում, եւ այն՝ որ նոյն գարի ութանական
թուականներին նրան յիշաւմ է Փարագեցին, Փոս-
տոս Բուզանգացու գործ համարելով, որ բեմն ծա-
նօթ չլինելով այս պատմութեան գրութեան գաղտ-
նիքին:

բողջապէս պակասում է այժմեան յունարէն օրինակնե-
րում: (ըստ ապագր. Աստուածանչի ընկերութեան):
1. «Զանգ ամս», 1889. Մարտ, եր. 42—43: —
Ենք հնարաւորութիւն շունիք բարգանելու Փ. ի նաեւ
սրբոց գորգերի եւ վկայարանութիւնների հետ, որոնցից
օդտուած պէտք է լինի հեղինակը, ինչպէս գիտել է Հ.
Գալթըքճեան: (Անդ:)

Առ յիրաւի Փ. ի պատմութիւնը գրուած է
մեր ասած ժամանակամիջնոցում՝ երեւում է նաեւ
հեղինակի մի քանի՛ քօղարկուած ձեւով արած
ակնարկութիւններից, որոնք յիշեցնում են Ե.
գարի Հայոց գէպը երբ նոյն իսկ կրօնական հա-
լածանքներն ու պատերազմը: Այս ակնարկու-
թիւնները հեղինակը մէջ է բերում իբրեւ տեսիլ,
գուշակութիւն, անէծք կամ օրհնութիւն. բայց
ներկայ բանասիրութիւնը գիտէ իսկական արծէ-
քով գնահատել հին հեղինակների այս անմեղ
սովորութիւնը:

Այսպէս՝ Յուսիկին տեսիլ քում գուշակուում
է, որ նա ունենալու է արժանաւոր զաւակներ,
որոնք պէտք է լուսաւորեն Հայոց աշխարհը, որոնց
միջոցով Քրիստոս պիտի փառաւորուի շատ լե-
զուածքով... նոքա մասարժաններից Քրիստոսի հա-
մար ատելութեան եւ նախանձի նշաւակ պիտի
լինին: Յետպ պէտք է թագաւորէ սոսութիւն,
անպիտան, բանարկու, մասիսար մարդկանց պատ-
ճառով, եւ քչերը պիտի մնան՝ որոնք հաստատ
մնան հաւատաւմ: (Գ. Ե. — Ակնարկութիւն
գրերի գիւտի, Ա. Ահակի կրած նեղութիւնների
եւ հաւատաւորացների վերայ): — Գանիէլ ծե-
րունին Հայերին յանդիմաննելով առւմ է. «Արդ
վան այսչափ ստութեանց ձերոց եւ պղծութեանց
բարձէ Տէր զղծագաւորութիւնդ ի ձէնջ, բարձէ
եւ զքահանայապետութիւնդ ի ձէնջ.» (Գ. Ժ. —
Բայարյաց ակնարկութիւն Արշակունեաց բարձ-
ման եւ Ա. Գրիգորի ցեղից քահայապետու-
թեան գալարման վերայ): Յետպ մանր նկարա-
գրում է այն վիճակը, որի մէջ պիտի գտնուին

¹ Այսուեղ խօսքը չէ կարող միայն Ա. Կերսէսի
մասին լինել, քանի որ ահսելիում շարունակ գործ է ա-
ծուած յունակի ձեւ՝ նոքա, ի նոցանէ, նոցա, որք, նոքօք.
ուրեմն խօսքը պէտք է վերաբերի Ա. Կերսէսին եւ Ա. Ստ-
հակին միանգամայն, եւ աւելի վերջնին:

Հայերը թագաւորութեան բարձումից յետոյ, երբ
“իրանց փասքը կողյօնած՝ օտար թշնամիների
ձեռքը կը մասնուին եւ հպատակութեան Ծին
կ'ենթարկուին, որ երբեք նոյցա վերայից չպիտի
վերանայ,» : — “Ներսէս Մեծը Արշակին անիծելին՝
նոյնպէս սպառնում եւ դուշակում է Արշակու-
նեաց բարձումը — “Թմզել ազգիդ Արշակունեաց
զցեաին բաժակն, արքչիք, արքունիքը եւ կործանեա-
նիք, եւ այլ մի եւս կանգնեսօնիք”, (Պ. ԺԵ): —
Նոյն հայրապետը Մուշեղ Մամիկոնեանին օրհնե-
լին՝ ասում է. “Տայէ քեզ զյաղթութեան
չնորհս զամենայն աւուրս կենաց քոյ. ի ձեռն քո
եւ ի ձեռն ազգի քո փրկեացէ զերկիրս Հայոց մին-
չեւ յախտեան” (Ե. Մ), որ համանալի է գառ-
նում՝ երբ մտաբերենը Մամիկոնեանների կատա-
րած գերբ առաջին կրօնական պատերազմի ժամա-
նակ: Թերեւսնոյն հանգամներով Հարկլինի բացա-
տրել եւ այն չափազանց գովկեսար, որ հեղինակը
տալիս է Մամիկոնեաններին ամէն մի յարմար
գէպբում:

Փ. ի պատմութիւնը Պ. դարսւմ յունարէն
գրուած Համարող բանասէրները գուցէ առարկեն,
թէ վերսիշեալ Հայերէն աղբիւրներից օգտուել,
վերսիշեալ ակնարկութիւնները Ե. դարի վերայ
ներմուծել է Հայ թարգմանիչը:¹ — Այսպիսի
բացարարութիւն մէնք ստիպուած կը լինէինք տալ
յիշեալ երեւոյթներին՝ եթէ անվիճելի փաստեր
ունենայինք, որ Փ. ի պատմութիւնը Պ. դարի
դործ է: Իսկ երբ այս կարծիքն, ինչպէս տեսանք,
դուքի է գրական հիմքերից՝ աւելորդ կը լինի վե-
րսիշեալ առարկութիւնը նոյն իսկ գնելը: Բայց

¹ Այսպէս էլ ենթադրում է Ա. Գարագալեան
Յուսիկի տեսիլքի եւ Գանիկէլ անէծքի մասին, (Քնն.
պատմ. Գ. 28, 35): Հ. Բ. Սարգսիսեան եւս ընդունում է,
որ Փ. ի պատմութիւնը “եկամուտ յաւելուաններու պատ-
ճառաւ բոլորին տարբեր երեւոյթ առած կը տեսնուի
այժմ”, Ագմթ., եր. 297:

եթէ մի բոպէ համաձայնինք էլ այդ առարկու-
թիւնն ընդունելու՝ դարձեալ սափառուած կը լի-
նինք ասել, որ Փ. ի պատմութիւնը յամենայն
դէպո չէ կարող կոչուել թարգմանութիւն, այլ
աղատ կաբանութիւն այն ենթադրուած յունարէն
պատմութիւնից, որը խմբագրողն ըստ կալի համե-
մել է որչափ եւ որտեղ որ կամեցել է, սկսեալ
առաջն գլխից, ուր յիշում է Ե. դարի պատմական
աղբիւրները, մինչեւ վերջին գլուխը, ուր յիշում է
Կուսուորչի ճգնաւթիւնը:

Սակայն Փ. ի պատմութեան ներքին հան-
գամանքները թոյլ չեն տալիս մինչեւ անգամ
ենթադրել Պ. դարի նախական, թէկուզ հա-
մառօմ՝ յունարէն սկզբագիր: Եւ յիրասի, այս
պատմութիւնը չունի այն յատկութիւնները, ու-
րոնք բնական, նոյն իսկ անհամար համար են
ժամանակակից պատմութիւններին. ընդհակառակն
լի է այնպիսի տարբերութ, որոնք յատուկ են ուշ
ժամանակ զրի առնուած պատմութիւններին:

Առաջն տեսակի յատկութիւնը, որ պա-
հանջնուած է ժամանակակից պատմութիւնից՝ ժա-
մանակագրութիւնն է, թէկուզ ոչ մանրամասն ու-
սորշ, բայց գոնէ ստոյդ: Փ. ի պատմութեան մէջ
չկայ ժամանակագրութիւն: Նա պատմական անց-
քերը չէ աւանդուած ժամանակագրական յաջոր-
դականութեամբ, անցքերը միմեանց հետ կապե-
լով իբրեւ պատմառ ու հետեւանք. այլ ամէն մի
զլութիր նորա մէջ (իիստ սակաւ բացառութեամբ)՝
առանձին աւանձին էպիզոդներ են, որոնք մէկը
միւսից կարող են յետ ու առաջ դրուել, կամ
դուրս ձգուել՝ առանց որեւէ վնասի պատմութեան
ամբողջութեան: Նորա մէջ գլուխները սովորաբար
սկսուում են “ապա”, “յետ այսորիի”, “յայնմ
ժամանակի”, անսորչ խօսքերով: Այս յատկու-
թիւնն արգէն ցոյց է տալիս, որ հեղինակը անց-
քերին ներկայ եւ ժամանակակից չէ եղել, որ

նոցա մէջ եղած ներքին կապը գիտնար ու զրէր. այլ ունեցել է կցկառար տեղեկութիւններ պատմական անցքերի մասին, որոնք գասաւորել է այնպէս՝ ինչպէս որ իրան աւելի հաւանական է թուել: Եթէ այս կցկառար անցքերի ժողովածուի մէջ երբեմն հարեւանցի յիշուում են ժամանակագրական թուեր՝ գործ չեն որոշում պատմական ձիգ ժամանակ, այլ մանաւանդ մատնում են հեղինակի անտեղեկութիւնն այս մասում:¹ Մենք մէջ կը բերենք մի քանի օրինակ, որոնք բաւական են ցայց տալու Փ.ի ժամանակագրաւթեան այլանդակութիւնը, եւ համոզելու՝ որ ժամանակակից հեղինակը անկարող է այդպիսի խորին ագիտութիւն ունենաւ իւր պատմած անցքերի ժամանակի վերաբերութեամբ:

Արշակ Բ. ըստ Փ.ի, թագաւորած է Պարսից Ներսէջ աբբայի եւ Յունաց Վաղէս կայսեր ժամանակ եւ նոցա երկուստեղ համաձայնութեամբ ու դաշնագրութեամբ պատերազմից յետոյ, որի ժամանակ կազմոր կաղամբավաճառի կերպարանքով լրացնեց Պարսից բանակը եւ գերի բանեց Ներսէջի կանոնց. (Գ. իա, Գ. ա): Արդ Ներսէջ թագաւորած է 293—302 թուին, իսկ Վաղէս 364—378 թուին. ուրեմն նոքա ժամանակակից չլինելով՝ ոչ կուր կարող էին մղել միենաց հետ եւ ոչ հաշուութիւն անել: Այս անստեղութիւնը վերացլնելու համար՝ հայ եւ օտարազգի պատմագիրներ կարծում են, որ Ներսէջ անունը սխալ մարք է դրուած, փոխանակ Շապուհի, կամ Ներսէջը ոչ թէ թագաւորն է, այլ Շապուհի որդին: Սակայն երկու բացատրութիւններն եւ ընդունելի

¹ Ժամանակագրութեան այս բացակայութիւնը Փ.ի ասիպէլ է Ա. Գարագաշեանին՝ գիմելու խորհնացու օգիութեան, որչափ եւ անհանձոյ է այս նորան, եւ Փ.ի հաղորդած պատմական անդեկութիւնները ճշնել զետեղել խորհնացու առաջ ժամանակագրական շրջանակում: Քնն. պատմ. Գ. 4:

չեն: Փ.ի մէջ Ներսէջ անունը կրկնաւում է երեք անդամ (Գ., իա, Գ., ա, ծը.), եւ երեք անդամն եւ նորան վերադրուում է միեւնոյն գործողութիւնը: Իսկ որ նա Շապուհի որդին չէ՝ երեւում է սորանից, որ հեղինակը երեք անդամն եւ նրան կոչում է Ներսէջ աբբայ, եւ յիրաւի Ներսէջ արքան էր (եւ ոչ Շապուհի որդին), որի հետ 296—297ին Հռոմայցիք պատերազմ մղեցին Գաղերիսի զօրավարութեամբ, եւ Գաղերիս լրտեսեց Ներսէջի բանակն ու գերի տաւաւ Ներսէջի կանաց ու որդոց: Բայց թողնենք Ներսէջ աբբայի այս անկարելի եւ անբացատրելի միջամտութիւնը Գ. գաղի երկրորդ կէսի գործերի մէջ, եւ Արշակի թագաւորութեան ժամանակը, ըստ Փ.ի, որունենք Վաղէսի ժամանակով, եւ ենթագրենք նրան թագաւորած Վաղէսի թէկուղ առաջնին տարում, 364ին: Արդ տեսնենք, ինչ ժամանակագրական անդեկութիւններ է տալիս պատմագիրը Արշակի մասին:

Արշակի օրովլ Ա. Ներսէս ձեռնադրուում է կաթողիկոս (Գ. գ. ուրեմն ամենականութիւնը 364ին): Եւ ուղարկուում է Վաղէսի մօտ պատգամաւոր (Գ. ե). ուղղափառութեան պատճառով զրկուում է աքսոր, ուր մնում թարի (Գ. դ): Վաղէսի մահից յետոյ արձակուում է եւ դալիս Հայաստան (Գ. գ. գ.): այս ժամանակ անդեկութեանում Տիրիթի եւ Գնէլի գէպքը, եւ Արշակ ամսւանանում է Փառանձեմի հետ, որ Սիւնեաց Անդոկ Նախարարի դուստրն էր² (Գ. ժ.): Սորանից յետոյ տեղի ու-

¹ Մեսրոպ Երէց (Սովերը, Զ. 58) ունի առնես ինն., բայց սամոյդ ընթերցու ածն է առնես ինն., ինչպէս ունի Փ.:

² Այս գէպքը Ներսէսի Յունաստան զնալուց եւ արսորուելոց առաջ մղեց կարող իննել քանի որ հեղինակի վկայութեամբ՝ մինեւ Հայրապետի Բիւղագին զնալու Տիրիթ եւ Գնէլ պատճառով էին կայսեր մօտ, որ Ներսէսին աքսորելով՝ այս երկուսին արձակեց Հայաստան,

նեցաւ պատերազմ Յունաց եւ Պալոսից մէջ, որի ժամանակ Արշակ մենակ իւր զօրբով, առանց Պարսիկների օգնութեան, կատորեց Յունաց զօրբը Մծբինի մօտ, որին իբրեւ շնորհակալութիւն՝ Շապոհ կամեցաւ Արշակին ամուսնացնել իւր գտատեր հետ. իսկ Անդոկ, տեսնելով առլանից իւր գտատեր Փառանձեմին հանճելը արհամարհանքն ու վտանգը՝ խաբէական հնարիներով Արշակին վախչել տուեց (Դ, ի.): Այս փախուստը Շապոհին կատաղեցնում է. բայց սա ուժ տարի լուս է մնում, որով հետեւ պատերազմը Յունաց հետ գեռ շարտենակուում էր (Դ, իա). իսկ երր պատերազմը վերջնում է Պարսիկների յաղթութեամբ՝ Շապոհ սկսում է Արշակի գէմ վրէժինդրութեան պատերազմ, որ տեսում է աւելի քան երեսուն տարի, (Դ, ի, իա.) որից յետոյ Արշակ ստիպուած է լինում գնալ Պարսկաստան եւ անձնատուր լինել Շապոհին, որ նրան Անյուշ բերդն է գնում (Դ, ծդ):

Թաղնելով այս պատմական անցքերի շարժառիթներն ըստ Փ. ի, որմէք աւելի վայելուչ են րսմանների, մանաւանդ հէքեաթների մէջ, թաղնելով ուրիշ բազմաթիւ անտեղութիւնները ուշագրութիւն դարձնենք միայն ժամանակադրութեան վերայ: Ս. Ներսէսի վերադարձ Հայաստան կարող էր աւելի ունենալ ոչ վաղ քան 378 թուին (Վաղէսի մահուան տարին): Թաղ հէնց նոյն տարին Արշակ ամուսնաւար Փառանձեմի հետ եւ Յունաց զօրբը կտարէր Մծբինի մօտ: Պորանից յետոյ ուրեմն անցնում են Շապոհի Յունաց հետ պատերազմների 8 տարին, ուրեմն, ամենականուին հաշուելով, մինչեւ 386. թիւը: Սորանից յետոյ

Արշակի սիրտն ամուսելու համար (Դ, ե): իսկ գնելի սպանութեան ժամանակ Կերսէս աբսորից վերադարձած որդուն:

Շապոհի եւ Արշակի մէջ սկսուած պատերազմ ները, որ երեսունից աւելի տարի տեւեցին հասնում են ըստ Փ. ի մինչեւ 416—420 թուական ները՝: Այս ինչ ստոյդ յայտնի է, որ Շապոհի Բ. մեռաւ 379ի սմասը, իսկ Արշակ Անյուշ բերդը դրուեցաւ 368ին:

Որչափ էլ աշխատիք բոնի ձգձգելով Փ. ի այս ժամանակադրութիւնը համաձայնեցնել ստոյդ ժամանակադրութեան հետ՝ դարձեալ կարկատանը չի յաջողի, այլ աւելի մեծ պատառուածք կ'առաջացնէ: Գնենք, օրինակ, որ Արշակ թագաւորել է ոչ թէ Վաղէսի, այլ Կաստանդի ժամանակ, 353ին. գնենք Արշակի ամուսնութիւնը Փառանձեմի հետ Ներսէսի Բիւլանդին գնալուց առաջ. գնենք Արշակի կարծեցեալ յաղթութիւնը Յունաց գէմ ոչ Վաղէսի մահից յետոյ, այլ 350ին (ըստ Հ. Գաթրթձեանի, որ սակայն կասկածելի է համարում այս գէպը, Տիեզ՝ պատմ. Բ. 497), կամ 359ին (ըստ Գարագաշեանի, որ հաւանական է համարում այս, Քնն. պատմ. գ., 74—80). գնենք Շապոհի Յունաց գէմ մղած պատերազմները վերջացած 364ին, Յովիհանսի անգամիւ ու սոսոր գաշնազրութեամբ: Սորանից յետոյ գարձեալ պէտք է գնենք ըստ Փ. ի երեսուն եւ չորսամեայ պատերազմ Արշակի եւ Շապոհի մէջ, որ կը հանէ մինչեւ 398 թուականը: Այս երեսնամեայ պատերազմի տարիները չենք կարող սխալմամբ գրուած համարել, քանի որ հինգ անգամ կրինուում են Փ. ի մէջ — երեք անգամ հէղինակի վկայութեամբ (Դ. ի, իա, ծ.), մի անգամ նախարարների բերանով (Դ. ծա.) եւ մի անգամ Շապոհի (Դ. ծդ): Ուրեմն գարձեալ տեմնում ենք, որ Փ. ի պատմութիւնը վերիվայր անելով, նորա պատմական անցքերի յաջորդականութիւնը հիմնվին խախտելով հանգերձ ստիպուած ենք այնու ամենայնիւ Արշակին տալ ըստ

Փ.ի աւելի քան քառասուն տարի թագաւորութիւն, այն ինչ նա խկազէս 20 տարուց եւ պակաս է թագաւորել:

Որ Փ.ի Արշակի մասին տուած ժամանակագրութեան մէջ թիւրիմացութիւն չկայ, որ նա լուրջ կերպով Արշակին տալիս է քառասունից աւելի տարի՝ երեսում է եւ ուրիշ կողմնակի տեղեկութիւններից, որ մեզ մատակարարում է այս հեղինակը: Երեսնամեայ պատերազմների մէջ մեծ գեր է կատարել, յաճախ Պարսից գօքքին առաջնորդ է Հանդիսացել Սերուժան Արծրունին: Տեսնենք, թէ ով է այս անձն ըստ Փ.ի: — Տիրան, Արշակի նախարդը, Հայր մարդպետի բառութեամբ կոսորել է տալիս ամբողջ Արծրունեայ տոհմը. ազատուում է միայն մի ծծկեր երեխայ, Շաւասպ, որին Մամիկոննեանները առնում փախցնում են իրանց Տայոց ամրութիւնները, մեծացնում են եւ իրանց տոհմից կին են տալիս, որից գարձեալ սերուում է Արծրունեաց տոհմը (Գ. ժը): Շաւասպը յետոյ վրէժ է առնում Հայք մարդպետից, որի ժամանակ նրան գտաւաճանութեամբ ազանելով (Գ. ժը): Այս Շաւասպի որդին է Սերուժան, որին Հեղինակը կոչում է “քեռորդի Վահանայ ի Մամիկոննեան տոհմէն” (Գ. ժ: Համեմատել եւ Ե. խդ: — “Սակայն դա մեր եղբայր է” առում են Մամիկոննեան կանոյքը Մերուժանի մասին): Քանի տարի էր Հարկաւոր, որ Տիրանի ժամանակ ծծկեր Շաւասպը՝ մեծանար, ամուսնանար, որդի առնենար (Սերուժան), որ նայնպէս մեծանար, Արշակի գէմ ապստամբէր եւ երեսնամեայ պատերազմներում վտանգաւոր հակառակորդ հանդիսանար Հայերի դէմ: Դնենք Տիրանի թագաւորութեան սկիզբը 343ին.¹ Դնենք Արծրունեաց կոտորածը հէնց նորս թագաւորութեան առաջն տարին. այս թուի

¹ Բառ Ա. Գարագաշեանի, Գ. 4: — Աւելի կանուխ գնել կարելլ չե:

վերայ աւելացնելով գոնէ 40 տարի (մինչեւ ծծկեր Շաւասպի որդին Մերուժան չափահաս դառնար), կը տեսնենք որ Մերուժանի մասնակցութիւնը երեսնամեայ պատերազմին պէտք է տեղի ունենար Դ. դարի ութմանական թուականներում: Այս հաշիւը, ինչպէս տեսանք՝ բալորովին ճիշդ է ըստ Փ.ի, բայց բոլորովին սխալ ըստ ճշգրիտ պատմութեան:

Մի ուրիշ հաշիւ: Արշակը Փառանձեմից ունենում է որդի Պապ (Դ. ժէ). առ չափահաս դառնալով ամուսնանում է եւ ունենում է երկու որդի, Արշակ եւ Վաղարշակ (Ե. լէ). սոքա էւ չափահաս դառնալով ամուսնանում են եւ միասին թագաւորում (Ե. իդ): որից յետոյ տեղի է ունենում Հայաստանի բաժանումը Յունաց եւ Պարսից մէջ: Արդ Պապ՝ Փ.ի հաշուով՝ չէր կարող ծնած լինել 379ից վաղ (Ս. Կերմէսի վերագարձը Վաղէսի մահից յետոյ, Գնէլի սպանութիւնը եւ Արշակի ամուսնութիւնը Փառանձեմի հետ), ոչ երկու որդի ունենալ առաջ քան 395 թ. իսկ առցա ամուսնանալը եւ թագաւորելը կարող էր պատահէլ ոչ վաղ քան Ե. դարի սկզբներում: Այն ինչ՝ համաձայն սույց պատմութեան, Պապ արդէն սպանուած էր 374ին, իսկ Հայաստանի բաժանումն եղաւ 384ին:

Այստեղ էլ աշխատենք ուղղել Փ.ի ժամանակարական անտեղութիւնները եւ համաձայնեցնենք արտաքին սույց պատմութեան հետ, ենթագրելով Արշակի թագաւորելը 353ին եւ հէնց նորս թուին նորա ամուսնութիւնը Փառանձեմի հետ. ուրեմն Պապ պէտք է ծնած լինէր ոչ վաղ քան 354ին: Արդ սա թագաւորում է 368ին, այսինքն 14 տարեկան, եւ սպանուում է 374ին, այսինքն 20 տարեկան: Կորա մեծ որդին, Արշակ, որ ծնած պէտք է լինէր ոչ վաղ քան 370ին (իւր հօր գոնէ 16 տարեկան հասակում), եւ

փոքրը, Վաղարշակ, որ ծնած պէտք է լինել ամենականութիւն 371ին՝ ամսւանանում են, որից յետոյ թագաւորում են 379 թուին, այսինքն ամսւանանում են 7—8 տարեկան հասակում եւ թագաւորում են 8—9 տարեկան։ Այս հաշուի անտեղութիւնն ինքն ըստ ինքեան՝ շատ աչքի է ընկնում, մանաւանդ երբ յիշենք, որ Պապ միքանի մեծամեծ պատերազմներ է մղել Պարսիկների դէմ, բազմաթիւ ապատամբութիւններ նուածել եւ նորանոր “բարեկարգութիւններ”, մայրել Հայաստանում, Կերսէս Մեծին թունաւորելուց յետոյ, 14—19 տարեկան խակ հասակում։ որ Պապից յետոյ ըստ Փ.ի թագաւորել է Վարազդատա, որին Հալածերոց յետոյ Մանուկը հաշութիւն է անում Պարսիկների հետ, ապա միքանի կուիր է մղում նոցա դէմ, յետոյ եօթը տարի խաղաղութեամբ կառավարում է երկիրը, մինչեւ Արշակին ու Վաղարշակին թագաւորեցնելը։

Տեսնում ենք ուրեմն, որ Փ.ի ժամանակադրութիւնը լիքն է սխալներով։ Ժամանակակից պատմագիրը չէր կարող Դ. գարի 50—60 ական թուականներում ապրող թագաւորին մի կողմից կապել Կերսէհի հետ (Գ. գար) եւ միւս կողմից նորա թագաւորութիւնը հասցնել մինչեւ Ե. գարի 20 ական թուականները։ չէր կարող նորան տալ քառասունից աւելի տարի թագաւորութիւն, մինչդեռ նա թագաւորել է 15—19 տարի։ չէր կարող վերջապէս այնպիսի պատմական - ժամանակագրական տեղեկութիւններ եւ յաջորդականութիւններ հաղորդել, որնք յայսնապէս հակառակ են ստոյդ պատմութեան։ Այս անտեղութիւնները վարագութելու համար եղած փաստաքանութիւնները կամայական եւ բռնի են, ուստի եւ անզօր։¹

¹ Օրինակ, Ա. Գարագալեան Արշակի երեսունեւ չորսամեայ պատերազմները Շապուհի հետ՝ հաշուում է ու ժամանակն Տրդատայ (Քնն. պատմ. Գ., 104), հակառակ

Միակ բանաւոր բացատրութիւնն այս է, որ հեղինակը ժամանակակից չէ իւր պատմած անցըերին, այլ աւանդութիւններից ու վեպերից է գրում ինչ որ գրում է։

Փ.ի պատմութիւնը չունենալով ժամանակակից գրումքի առաջին յատկութիւնը — ժամանակադրական եւ անցըերի յաջորդականութեան ստուգութիւն՝ ընդհակառակին ունի այն բոլոր հանդամանքները, որնք յատուկ են ոչ ժամանակակից գրուածքներին, այսինքն Հրաշքների կուտակութիւն, աւանդութիւններ, առասպելներ, չափականյութիւններ։ Գիրքը ծայրէ ծայրը լի է այս տարրելով, այնպէս որ օրինակներ բերելը աւելորդ աշխատաւթիւն է։ Եթէ մեր յիշողութեան միջով անցիացնենք այս պատմութեան նկարագրած գլխաւոր գործող անձնաւորութիւնները, — Վըթաննես, Յուսիկ, Կանիկը, Խաղաղ, Տիրան, Արշակ, Պապ, Վասակ, Մուշել, Մանուկը, Մերուժան, — կը տեսնենք, որ սոցանից ամէն մէկը զարդարուած է վերսիշեալ Հրաշային եւ վիպական տարրելով, որը շատ, որը սակաւ շափով, ուրեմն եւ ոչ մէկը ճշգրիտ պատմական տիպ չէ ներկայացնում։ Կայն խակ բուն պատմական անցըերը Փ.ի մէջ մեծ մասամբ կրում են վիպական - գիրցազներգական գրում եւ սորանով մատում են իրանց աղջիւրը։ Եւ յիրաւի, կարող էր ժամանակակից հեղինակը գրել Արշակի այն երեսնամեայ պատերազմների պատմութիւնը, որոնց մէջ քասանից աւելի անգամ Պարսկաստանից ա-

Հեղինակի քանիցս անգամ կրկնած բացայայտ վեցյութեան, թէ այդքան տարի Արշակն է մղել պատերազմ։ Կայն հեղինակը զարմանալի ազատութեանը է վարուում Փ.ի հետ ասելով, թէ Առաջ բարպանուաց՝ թագաւորելն Արշակայեղաւ համութեամբ երկուց թագաւորաց, կառունեաց Եւ Շապուհայ (Քնն. պատմ. Գ., 47), այն ինչ ըստ Բուզանդայ (Գ. իս. Դ. ա) թագաւորելն Արշակայ եղաւ համութեամբ Վառլեսի եւ Կերսէնի։

Հաղեն բանակներ են գալիս Հայոց վերայ, երբեմն
4—5 միջին բաղմութեամբ, եւ Վասակ զօրավարն
ամէն անդամ բոյրին կոտորում է այնպէս, որ
նոցանից ոչ մինչ չէ մնում, “բայց միայն չարագործն
Մերուժանն մասի ճողովեալ” փախչում է:
Այս կախարդ Մերուժանը 17 անդամ մենակ
փախչում ազատուում է ընդհանուր կոտորածից.
Ի վերջո մաս 30 միջին պարսիկ կոտորելուց յետոյ
Արշակ... անձնատուր է լինում Շակուհին: Կա-
րելի է արդեք ենթադրել, որ ժամանակակից
հեղինակն ընդունակ լիներ հաւատալու եւ պատմե-
լու, թէ Գանիէլ եպիսկոպոսը կօշկով քալելով
անցնում էր ջրերի վերայով. թանձր ձիւների միջով
ճանապարհորդելիս՝ ձիւնը ցամաքում՝ սեւ հող
էր դառնում. հեռու տեղու ուղեւորուելիս՝ փայլակի
նման թռչելով յանկարծակի ուզած տեղն էր
լինում. մեռելիներ էր յարուցանում, եւ դեռ աւելի
մեծ հրաշքներ էր զործում: Այսպիսի հրաշքներ
սուրբ անձերի մասին, առասպելական քաջութիւն-
ներ աղդային հերոսների մասին կարող են ստեղ-
ծուել եւ ստեղծուում են. բայց սորա համար
հարկաւոր է ժամանակ, սերունդների յաջորդու-
թիւն, որոնք միմեանցից աւանդաբար առնելով՝
հետզետէ զարդարէին նախնեաց աւանդած պարզ
դիպուածները: Գերբնական երեւյթների, առաս-
պելիների եւ չափազանցութիւնների ներկայու-
թիւնը որեւէ պատմական գրուածքում՝ մատնում
է նորա յետնագոյն ժամանակի գործ լինելը եւ
նորա աղքիւրները — աւանդութիւն եւ վեպեր:

Հարկաւոր էր առանձին ուսումնասիրու-
թիւն՝ որոշելու համար բովանդակութիւնն ու
ծաւալն այն վեպերի եւ աւանդութիւնների, որոն-
ցից հիւսուած է Փ.ի պատմութիւնը: Կերկայ
յօդուածի նպատակից դուրս լինելով՝ այսպիսի
ուսումնասիրութիւն՝ հարեւանցի միայն կը նկա-
տենք, որ Փ.ի պատմութեան մէջ երեւում են

ժողովրդական վիպասանութեան երեք առանձին
դաւառներ. — «) Հոգեւոր, Է) Ազգունական տան
եւ Գ) Մամիկոնեան տան: Առաջինի մէջ մտնում
են Վրթանէս, Յուսիկ, Գանիէլ եւ մանաւանդ
Հայոց սիրելի հայրապետ Մեծն Կերուէս, որի
պատմութիւնն առանձնապէս զարդարուած է սուրբ
Հայրելի, նոյն իսկ Ս. Գրոց անձնաւորութիւնների
դիպուածներով: Երկորդի մէջ գլխաւոր տեղն է
բոնում Արշակը, իւր ամսւանութեամբ Փառան-
ձեմի հետ, որ այնքան յիշեցնում է Արտաշէսի
եւ Սամիկոնիկ վէպը, Արշակաւանի շինութեամբ
եւ աւերածով, իւր յաճախակի պատերազմներով
Սասանեան ահել զօրութեան դէմ, կալանաւորու-
թեամբ ու ողբերգական վախճանով: Երրորդը մեղ
ներկայանում է իրեւ Մամիկոնեան տան առհ-
մային վիպասանութիւն, որտեղ գովասանու-
թեամբ աւանդուում էին այդ նախարարութեան
ծագումնու պատմութիւնը, Մամիկոնից եւ Կոնակից
ոկնեալ մինչեւ Մանուէլ: Այստեղ էլ գլխաւոր
հերոսն է Վասակ սպարապետը, Արշակի դայեակն
ու անբաժան ընկերը նորա թագաւորութեան
ոկրքից մինչեւ Անցուշ բերդը, մի տիպար անվէհեր
քաջութեան, հայրենասիրութեան եւ անձնանուելը

1 Նորա ձեռնադրութեան գնան ու վերադաշնար՝
Լուսաւորչին, ձեռնադրութեան ժամանակ ազանի իշնելը՝
Փերիսնոսին. Զայսասանում կասարած գործերը՝ Լուսա-
որչն ու Մերոպին. Վաղէսի հիւանդ որդու դիպուածը՝
Ս. Բարսեղին, ասքորը՝ շատ հայրապետների աքսորին.
Նպատի վերայ աղօթելը՝ Մովիս մարգարէին (Ելք, Ժէ,
8—13). մահը եւ թաղումը՝ Ս. Սահակին: Թերեւս նաեւ
անապատ կզում՝ հրաշքով՝ կերակուիլը՝ Խորայելացուց
մանաւայինն ի ջրին՝ անապատում. Արշակաւանի անէծքը
Յանիան մարգարէի քարզութեան նինուէւմ: — Ս. Կեր-
ուսի փարում Փ.ի հեղինակն էլ իւր կողմից շատ բան
ունի աւելցրած:

2 Մի աղօտ ակնարկութիւն Տիրիթ - Փառանձեմ
վէպի գոյութեան մասին կարծես երեւում է հեղինակի
այս խօսքում. «Եզեւ նու (Փառանձեմ) մայր ողբոցն, եւ
ձայնարկում ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել
վիրսն արքանացն Տիրիթաց, զակն դնելն» եւն: Ք. Ժէ:

տիրասիրութեան։¹ Գուցէ այս աղբիւրներից դուրս հեղնակն ունեցած լինի եւ դրաւոր պատմական աղբիւր, որ եթէ եղել է չէ ունեցել էական նշանակութիւն եւ տիրապետող ցմ գրքի ոդու, բնաւորութեան, ոճի ու ծաւալի վերայ, այլ ծառայել է իբրեւ օժանդակ երկրորդական աղբիւր իւր վիպական եւ վկայաբանական աղբիւրների պակասը լրացնելու։

Այս աղբային վիպասանութիւններն ու վկայաբանութիւններն են եղել մեր կարծիքով այն գլխաւոր աղբիւրները, որոնցից անձանօթ հեղնակը, — ինչպէս նորանից առաջ Ագաթանց գեղափի խմբագիրը եւ նորանից յետոյ քերթողահայրը, — հիւսել է իւր պատմութիւնը։ Այս տեսակէտից միայն նայելով՝ մեզ հասկանալի կը դառնան Փ. ի պատմութեան ներքին եւ արտաքին բնորոշ յատկութիւնները — տարագէպ գործերը, որոնք ծիծաղէլի են իսկական պատմութեան մէջ, ժամանակագրութեան բացակայութիւնը կամ անսուզութիւնը, անձնաւորութիւնների շինթութիւնը մէկը միւսի հետ, էպիգոգական, անկապ գլուխները, լեզուի ժողովրդական ողին, ճոխ նկարագրական, բազմաբառ բայց պարզ ո՞ճ եւն։

Ո՞ւ է այս անձանօթ հեղնակը. — չգիտենք, բայց որ նա հայ է մենք տարակայս չունինք։ Մենք արդէն յիշեցինք, թէ ինչպէս նա բարձր տիտղոսներ է տալիս Հայոց թագաւորներին, ինչպէս բնական, կենդանի, ժողովրդական է նորալեզուն, որ թարգմանական լեզուի կապահները չեն կրում։² Աւելցնենք այստեղ նորա մի քանի

¹ Մեզ թուում է, թէ երեսնամեայ պատերազմ ների էպիգոգների մէջ հեղնակը պահպանել է վեպին յատուկ արտայայտութեան ձեւը, կաղապարը. — «Ապա գայր... (այսքան բիւրու)»։ — Ապա ելանէր զրավարն Աշուակի . . . ասենայն ընդ սուր հանեխն, բայց միայն Մերուժան . . . փախչեր միածիլ»։

² Մինչեւ անդամ արդւեստական պաճուճանքներ ու

ուրիշ յատկութիւնները, որոնք միայն հայ հեղինակը կարող էր ունենալ։ Նա չափազանց նախանձախնիքի է աղղային փառքին ու պատւին. Հայր նորա հաւատով անպարտելի է։ Ամբողջ պատմութեան մէջ, որ լիքն է հարիւրաւոր պատերազմների յիշատակութեամբ ու նկարագիրներով՝ Հայերը ոչ մի անգամ չեն յաղթուում ճակատամարտի մէջ, այլ միշտ յաղթուում են, այն էլ մեծ մասմբ թշնամու բանակն անմի անելով։ Եթէ թշնամին արշաւում է Հայաստան, կոտորածներ է անում, գերի է տանում, այդ լինում է միայն այն գեպացում՝ երբ թագաւոր չկայ, կամ նա աշխարհի ուրիշ կողմումն է գտնուում, կամ ուրիշ բանով է զրարկուած լինում. Բայց ճակատ առ ճակատ կուտելիս՝ Հայերը միշտ կոտորում են տանապատիկ ու քասանպատիկ բազմաթիւ թշնամուն։ Նորա պատմութեան մէջ գործող հայ թագաւորների վախճանը յայտնի է — Տիրան գերի է տարուում Պարսկաստան. Արշակ Անյաւշ բերդում է մեռնուում. Պակ սպանուում է Յունաց կայսեր հրամանով։ Բայց հեղնակին աղգային հպարտութիւնը թոյլ չէ տալիս ճանաչել կամ գրել, որ նոցա այս տեսակ վախճանի պատմառը նոցա տկառութիւնն է։ Ոչ. ամէն անգամ մի անակնուների դիպուած է պատահում, որի առաջ անզօր է ամենազօրաւոր մարգն անդամ։ — մէկին դաւաճանութեամբ բունուում են՝ երբ զօրքը բացակայ է լինում. միւսին Շապուհ «մեծաւ աղաչանօք եւ պատարագօք, հրավարակօք եւ սիրով» իւր մօտ է կանչուում՝ երբ բոլոր նախարարներն ել նորանից ձեռն-

բառախաղեր է պարունակում. — «Մեծապարգեւ մեծապատիւ մեծապարգեւ»։ «Զերերութեան պատիւն պատուակալ պատուականութեանն»։ «Զէտա նորա նորին նմանին չարշարեցին վասն նոյն նորին իրաց»։ «Տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռն ձեր»։ — «Ճանապարհ ընդ Եղիշե»։ եւ մեծապէս նարեաց Մերուժան, արտեցաւ ընդ բանսն եւն։ (Գ. ժ., իս, Գ. ժ. ժ. ժ. և. իդ.)։

թափ են եղել, երկարատեւ պատերազմերից ձանձրացած. երրորդին խարդախութեամբ սպանում են սեղանի վերայ: Նա Հայոց զօքքը, նորա սարքն ու կարգը, հայրենասիրութիւնն ու տիրասիրութիւնը նկարագրում է զմայլմանքով. — “Չորեք հարիւր հազար զօր կուռ վասեալք, որ ընտիքը եւ պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակութեանն. նիդակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվլէպք, կորովլիք. վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկիւլ զանդիտելոյ յարանց յախանց. համակ հեծելազօքք զատհաւորք, պատենազէնք, սազաւարտաւորք, դրօշաւորք, կազմ նշանաւորք, բազմաձայն փողարօքն” (Դ. ի): “Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրսալարին Վասակայ արք գործոց իբրեւ վաթառն հազար, ընտիքը եւ պատերազմողք, որ միամիտք եւ միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդւոց եւ կանանց իւրեանց, եւ ի վերայ աշխարհին դնել զանձին իւրեանց մինչեւ ի մահ եւ ի վերայ աշխարհին եւ գւաւառայն բնակութեան. հասանել մարտնչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վերայ ուխտին պաշտամանն որբոց եկեղեցեաց իւրեանց, ի վերայ հաւատոյ ուխտին անուան Առածոց իւրեանց, փսխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունոց” (Դ. իդ): “Զամենայն ախոյեանն, զոր ի ճակատուն յայն սպանանէին՝ (զօքքն Հայոց)՝ նուրիէին իւրեանց առաջի թագաւորին Արշակայ. զի զամենայն զոր սպանանէին՝ առէին. Արշակայ թագաւորին մերայ զահ լիջեր: Եւ յորժամ Հայոց ազատանայն ախոյեանցն նիդակաւորացն ռազմ արարեալ յարձակեալ զգօրսն Պարսից նիդակաւորքն առեալ ընկենուին՝ առէին. Առ Արշակ քաջ, (Ե. ե): “Կոյն իսկ Ծապուհ զմայլում է Հայոց զօքքի քաջութեան ու տիրասիրութեան վերայ. “Յորժամ Հայոց նիդակաւորքն առաջի կարգէին —

պատմում է նա իւր իշխաններին — այսպէս յարշակէին, որպէս զեաւն մի բարձր եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ, հզօր եւ անշարժ... զարմացեալ եմ ես ընդ մտերմաւթիւն միամութեանն հայստան գնդին ընդ տիրասիրութեանն... երանի՞ որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրամէր եւ միաբան միամիտ զօրացն” (Ե. ե): Հեղինակը անհուն սիրով սիրում է Արշակունի թագաւորներին, որոնց շարունակ կոչում է “Բնակ տեարք”, աշխարհին, որոնց համար Հայերը պարտաւոր են իրանց անձը զոհէլ, արիւն թագիւլ: Ո՛վ որ Արշակունի թագաւորի գէմ ապստամբում է կամ գաւ է լարում՝ հեղինակը բառ չէ գտնում նրան հայհայելու: “Վատանշան”, “Հարագործ”, “պիղծ”, “անօրէն”, “մեղաւոր”, “կախարդ” — այս անուններով է նա կնքում Մերուժանին: Կաչէ կարող զապէլ իւր զարցոյթը Փիսակ Սիւնու գէմ, որ իւր թագաւորի վերայ քսութիւն արաւ. “Այլ մի անարգ, որ ոչինչ պակաս քան զդեւ էր մոլորութեամբ... զայս ամենայն լուսաւ Վարազ-Ծապուհ ի կատաղախօս, ի շնաբերանն Փիսակայ... բանքն յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանց շորիկն, շոդմոցն, տիրանենին եւ տիրագրուժն, տիրասպանուն, տիրասմատնիչն Փիսակայ, յայն յաշխարհակորյոյ յառնէ անտի” (Գ. ի). Եւ այս այն գէպքում երբ Փիսակ մատնել է մի թագաւորի՝ որին ինքը հեղինակը կոչում է անպիտան եւ անմիտ թագաւոր (Գ. ժդ, ժը): Այն պանչելի առասպէլը, որ հեղինակը պատմում է իբր տեղի ունեցած Արշակի կալանաւորութեան ժամանակ (Գ. ծդ), ցոյց է տալիս, թէ հեղինակն ինչ կոյր հաւատ ունէր Հայոց հողի ու ջրի զօրութեան, հայ թագաւորի անպարտելիութեան վերայ իւր ընիկ երկրում: Պրաստամատի պատմութիւնը, որ բոլոր աշխարհային պատիւներից լաւ է համարում՝ մի օր միայն միտթարել իւր բնիկ տիրոջ, բանտար-

կուած Արշակին, եւ նորա անձնասպանութիւնից յետոց ինքն էլ չէ ուզում այլեւս օր ու արեւ տեսնել. Վասակի, Մուշեղի եւ Մանուէլի գործերը, զօքի անձնազնութիւնը — ուրա բոլորը արտայայտում են հեղինակի հայեացըն ու իդեալը — անպայման սեր եւ հաւատարմութիւն դէպ ի Արշակունի հայ ժագաւորները:

Այսպիսի մի հեղինակ, որ խորին հմտութիւն ունի հայ ժաղովութի բարքերին եւ հաւատալիքներին,¹ որ Հայաստանի տեղադրութեան այնպէս ծանօթէ, ինչպէս քիչերը մեր պատմագիրներից, որ գիտցել է Հայոց ազգային պատմական վէպերն ու նոցանից օգտուել, որ ամենայն սիրով սիրում է Հայոց “բնիկ”, Արշակունիներին, Հայոց “մեծ”, “քաջարանց”, թագաւորներին, որ Հայոց զինուորական եւ ազգային պատուին այն աստիճան սիրահար է եւ նախանձախնդիր՝ — այսպիսի հեղինակն, ասում ենք, չէ կարող լինել օտարազդի. Նա հայ է եւ մարմնացում Հայոց ազգային ինքնածանաչութեան, մասամոռութեան, հասնող պատուակիրութեան, հաւատալիքներին — ամբողջ հայ ոգուն:²

Այս հայ մատենագիրը (գուցէ մէկը Ա. Մեսրոպի աւագ աշակերտներից, որոնց առանձին գրուածքները չեն յիշատակուում), Ե. գարբի միջավայրում, օգտուելով գլխաւորապէս հայ անգիր ու գրաւոր աղբւորներից՝ հիւսել է իւր ազգային պատմական վէպը, այնպիսի լեզուով՝ որի մէջ ցուլանում է ժողովրդական - վիստական ոգին: Բայց ժամանակի սովորութեան համեմատ, աւելի գրքի յաջողութիւնը գիտելով՝ ծածկել է իւր անունը,

1 Գ. ի, ծ. ի, իւ, ին, լու, սակ, ջ. ը, թ:

2 Գեղեցիկ է բնորոշել այս հայն չ գամթըռձնան. “Բուն հայ հողեն բուսած, բուրբ-հայ երկիրը թղաւ ու քլաւ չափած, ամէն մէկ առղին մէջ իր հայրենակացաց գաղափարաց գունուով: սնած մարդոց կաշելով հեղինակին: Հանդ, ամս. 1889, գ. եր. 41:

եւ իւր գրտւածքը վերագրել է այնպիսի մարդու որի անունը կարող էր գրաւական լինել իւր պատմութեան հաւատարմութեան: Այսպիսի անձ է եղել հեղինակի կարծիքով՝ ծերունի հստոմ Փաւատոս եպիսկոպոսը, Ս. Ներսէսին ձեռնադրողը եւ նորա գործակիցը, Դ. գարի դէպքերին ժամանակակիցը, որին եւ դիտմամբ կոչում է “ժամանակագիր”, “ժամանակագիր Յոնանց”, իւր անձն ու ազգութիւնը վարագուրելու եւ իւր պատմութեան յարգը բարձրացնելու համար: Այսպէս է վարուել եւ հեղինակին ժամանակակից մի ուրիշ մատենագիր, թերեւս նորա ընկերներից մէկը, իւր պատմութիւնը վերագրելով Տրդադիքարուղար հուոմ Ագաթանգեղապին: Այսպիսի կեղծիք են մեր մատենագրութեան մէջ՝ հաեւ ասորի Մար-Աբան ու Զենոնը:

Եթէ ուղիղ է մեր այս տեսակէտը՝ ուրեմն բանասիրութեան հերթական խնդիրը պէտք է լինի՝ ուսումնակիրել Փ. ի պատմութեան աղջիւրները, գրաւոր եւ անգիր, սահմանել անգիր աւանդութիւնների ու վէպերի գաւառները գըքի մէջ, որոշել Հայոց այս կրօնական-աշխարհական Հայութիւնի մէջ վիպականը պատմականից, առասպեկտականը իրականից, եւ այնուհետեւ միայն օգտուել նորանից՝ պատմական եւ աղջագրական աշխատութիւնների մէջ: Խակ աւանց այսպիսի նախապատրաստական ուսումնակիրութեան Փ. ից իբրեւ սասց պատմութիւնից օգտուելով վաղաժամ է եւ սխալ եղակացութիւնների կը բերէ:



III. *Paraceraspis* spissus Linnaeus. - I

IV. *Paraceraspis* spissus Linnaeus. - II

V. *Paraceraspis* spissus Linnaeus. - III

VI. *Paraceraspis* spissus Linnaeus. - IV

VII. *Paraceraspis* spissus Linnaeus. - V

a. 1. *Paraceraspis* spissus Linnaeus. - VI

zabrus. yelkovskii

No C. - Moscow. 3. - 378-382, Arthropoda

Ac. 382-383 3. in Marakas;

Troitsk 3. 386-387 386-387

Ac. 387-388 St. Petersburg 387

b. *Paraceraspis* spissus Linnaeus. - VII

c. *Paraceraspis* spissus Linnaeus. - VIII

d. *Paraceraspis* spissus Linnaeus. - IX

e. *Paraceraspis* spissus Linnaeus. - X

f. *Paraceraspis* spissus Linnaeus. - XI

g. *Paraceraspis* spissus Linnaeus. - XII

h. *Paraceraspis* spissus Linnaeus. - XIII

i. *Paraceraspis* spissus Linnaeus. - XIV

j. *Paraceraspis* spissus Linnaeus. - XV

k. *Paraceraspis* spissus Linnaeus. - XVI

l. *Paraceraspis* spissus Linnaeus. - XVII

m. *Paraceraspis* spissus Linnaeus. - XVIII

n. *Paraceraspis* spissus Linnaeus. - XVIX

o. *Paraceraspis* spissus Linnaeus. - XX

p. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXI

q. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXII

r. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXIII

s. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXIV

t. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXV

u. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXVI

v. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXVII

w. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXVIII

x. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXIX

y. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXX

z. *Paraceraspis* spissus Linnaeus. - XXXI

ՀՀ Ազգային գրադարան



NL0361217

